ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն

ՀՀ արոտների կայուն կառավարման հայեցակարգ

(Իրականացնող՝ «Ընվայզ Բիզնես և Իրավաբանական Խորհրդատվություն» ՍՊԸ)

նոյեմբեր, 2019

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

Ամփոփ Նկարագիր

Բնական էկոհամակարգերի խախտման ժամանակակից պայմաններում, մարդկության կենսապայմաններն ապահովելու համար արդիական է պահպանել ներկայումս գոյություն ունեցող բնական լանդշաֆտներն ու էկոհամակարգերը և դրանց կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունները: Այդ տեսանկյունից մեծ կարևորություն ունի բնական կերհանդակների կայուն կառավարումը՝ հետևաբար դրանց կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունների ապահովումը և պահպանությունը:

Բնական կերհանդակները յուրահատուկ բնական էկոհամակարգեր են և բացի տնտեսական նշանակությանը, ունեն նաև սոցիալական և բնապահպանական մեծ նշանակություն: Ըստ այդ, շատ կարևոր է բնական կերհանդակների պատշաճ կառավարումը:

Հայեցակարգի հիմնական նպատակն է ՀՀ-ում արոտավայրերի կառավարման արդյունավետ և միասնական մեխանիզմի ներդրումը և գործարկումը, որի կիրարկումը կհանգեցնի՝

- Անասնապահության ոլորտի կայուն զարգացմանը, ներառյալ անասնապահության ոլորտի արտադրողականության բարձրացմանը:
- Արոտավայրերի կայուն օգտագործմանը, պահպանմանը, վերականգնմանը, կենսաբազմազանության խոցելիության կրճատմանը, ինչպես նաև բնական էկոհամակարգերի կայուն զարգացման ապահովմանը:

Մասնավորապես, Հայեցակարգում ներկայացված են բնական կերհանդակների (գործառնական նշանակությամբ արոտների) կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները, արոտների կառավարման տեղական և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև այդ ուսումնասիրությունների հիման վրա առաջարկում է ՀՀ-ում արոտների կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրում:

Բովանդակություն

Ամփոփ Նկարագիր 2
1. Ընդհանուր դրույթներ 4
2. Նախաբան 5
2.1 Հայեցակարգի նպատակների սահմանում 5
2.2 Մոտեցումներ և մեթոդաբանություն 7
3. ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները 10
3.1 Օրենսդրական դաշտը և առկա խնդիրները 10
3.2 Ինստիտուցիոնալ համակարգերը և առկա խնդիրները 21
3.3 Պահանջվող ռեսուրսները և առկա խնդիրները 26
4. Բնական կերհանդակների՝ արոտների կառավարման միջազգային և տեղական փորձը 29
4.1 Արոտների կառավարման միջազգային փորձ 29
4.2 Արոտների կառավարման տեղական փորձ 29
5. ՀՀ-ում բնական կերհանդակների՝ արոտների կառավարման հնարավոր մեխանիզմները 30
Հավելվածներ 41
Հավելված 1. Աշխատանքային խմբում ներկայացուցիչներ ապահոված կառույցների ցանկ 41
Հավելված 2. Աշխատանքների ընթացքում անհատական հանդիպումներ իրականացրած շահառուների ցանկը 42
Հավելված 3.Հանդիպումների ընթացքում ներկայացված ոլորտում առկա խնդիրները և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկները 43
Հավելված 4.Աշխատանքային խմբի անդամների հետ ունեցած հանդիպումների արձանագրությունները 45
Հավելված 5. Կենտրոնական Ասիայի երկրներում արոտների կառավարման ոլորտում առկա խնդիրները 58
Հավելված 6. Բնական կերհանդակների կառավարման տեղական փորձ 62
Հավելված 7. Ոլորտին բնորոշ խնդիրների լուծմանն ուղղված միջազգային փորձը 67
Հավելված 7.1. Ղրղզստանում գործող ինստիտուցիոնալ համակարգը 73
և տարբեր մարմինների լիազորությունները 73
Գրականության ցանկ 78

1. Ընդհանուր դրույթներ

Սույն հայեցակարգը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) բնական կերհանդակների (գործառնական նշանակությամբ արոտների) կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները, արոտների կառավարման տեղական և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև այդ ուսումնասիրությունների հիման վրա առաջարկում է ՀՀ-ում արոտների կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրում:

<u>Հայեցակարգում օգտագործվող հիմնական հասկացություններ և հապավումներ</u>

Սույն հայեցակարգում օգտագործող հասկացությունները և հապավումներն ունեն հետևյալ նշանակությունները՝

- **Արոտավայր՝** գյուղատնտեսական կենդանիների արոտային շրջանի կազմակերպման (արածեցման), ինչպես նաև այլ նպատակներով (որսորդության, մեղվաբուծության, դեղաբույսերի հավաքման, զբոսաշրջության և հանգստի) օգտագործվող բնական բուսածածկով գյուղատնտեսական հանդակ[1]:
- **Բնական խոտհարք՝** բազմամյա, գլխավորապես չափավոր խոնավասեր բարձրացողուն խոտաբույսերով պատված մարգագետին, որը հիմնականում օգտագործվում է հնձելու եղանակով մսուրային շրջանին անհրաժեշտ կոպիտ ծավալային կեր՝ խոտ կուտակելու նպատակով[1]:
  - **Բնական կերհանդակ՝** գլխավորապես բազմամյա խոտաբույսերով, ինչպես նաև կիսաթփուտային և թփուտային բուսականությամբ պատված էկոլոգիական համակարգեր են, որոնք արտադրատնտեսական նպատակով և գործառնական նշանակությամբ օգտագործվում են որպես արոտավայրեր և խոտհարքներ:
- **Բնական կերհանդակների կառավարում՝** այնպիսի համալիր գործողությունների իրականացում, մասնավորապես՝ օրենսդրական կարգավորումների, ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների և պահանջվող ռեսուրսների ապահովում, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել բնական էկոհամակարգի կայուն զարգացումը, էկոհամակարգային ծառայությունների հարատև մատուցումը, կկրճատվի արոտավայրերի կենսաբազմազանության խոցելիությունը:
- **Ուղեցույց՝** «Արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց», Գագիկ Թովմասյան, 2015թ.: Փաստաթուղթը մշակվել է ԳՄՀԸ կողմից աջակցված «Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Գերմանիայի տնտեսական զարգացման նախարարության կողմից:
- **Ձեռնարկ՝** «Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկ. Հայաստան», Գագիկ Թովմասյան, 2015թ.: Փաստաթուղթը մշակվել է ԳՄՀԸ կողմից աջակցված «Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում»

[1]Սահմանումը վերցրած է «Հայեցակարգում օգտագործվող հիմնական հասկացություններ և հապավումներ» բաժնում ներկայացված Ուղեցույցից:

ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Գերմանիայի տնտեսական զարգացման նախարարության կողմից:

- **Հետազոտություն՝** «ՀՀ արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրների և դրանց պատճառահետևանքային կապերի հետազոտություն», ապրիլ 30, 2019: Հետազոտությունն իրականացվել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից Հարթակի շրջանակներում՝ «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:
- **Հարթակ՝** 2018 թվականին հանրապետությունում ձևավորված «ՀՀ բնական կերհանդակների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակ», որի հիմնադիրներն են Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ն, Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերության կողմից աջակցվող «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագիրը և նախկին Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» 2-րդ ծրագիրը:
- **ՊԽՄ՝** պայմանական խոշոր միավոր:
- **ԱԳԿԿ՝** Անշարժ գույքի կադաստրի կոմիտե:
- **ԱՎԾ՝** Ազգային վիճակագրական ծառայություն:
- **ԱՎԿ՝** Ազգային վիճակագրական կոմիտե:
- **ՏԻՄ՝** Տեղական ինքնակառավարման մարմին:

2. Նախաբան

2.1 Հայեցակարգի նպատակների սահմանում

Հայեցակարգի հիմնական նպատակն է ՀՀ-ում արոտավայրերի կառավարման արդյունավետ և միասնական մեխանիզմի ներդրումը և գործարկումը, որի կիրարկումը կհանգեցնի՝

- Անասնապահության ոլորտի կայուն զարգացմանը, ներառյալ անասնապահության ոլորտի արտադրողականության բարձրացմանը:
- Արոտավայրերի կայուն օգտագործմանը, պահպանմանը, վերականգնմանը, կենսաբազմազանության խոցելիության կրճատմանը, ինչպես նաև բնական էկոհամակարգերի կայուն զարգացման ապահովմանը:

<u>ՀՀ-ում արոտավայրերի կայուն կառավարման կարևորությունը</u>

Հայաստանի հանրապետությունը լեռնային երկիր է: Այն զբաղեցնում է 29,743 հազար քառակուսի կիլոմետր տարածք և ծովի մակերևույթից միջինում գտնվում է 1700 մ բարձրության վրա: Հանրապետության տարածքի 76,6 տոկոսը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա և 13,5 տոկոսը՝ 2500մ-ից ավել բարձրության վրա:

Բնական կերհանդակները յուրահատուկ բնական էկոհամակարգեր են և բացի տնտեսական նշանակությանը, ունեն նաև բնապահպանական մեծ նշանակություն: Մասնավորապես՝

- Բնական էկոհամակարգերի (այդ թվում և բնական կերհանդակների) կողմից տրամադրվում են մի շարք էկոհամակարգային ծառայություններ, որոնք

ունեն ապահովող (սնունդ, մաքուր ջուր, թարմ օդ, վառելիք, հումք), կարգավորիչ (կլիմա, բնական աղետների և համաճարակների, հողի էրոզիայի կանխում, ապաստաններ, կենսամիջավայր), մշակութային (գեղագիտական, կրոնական, գիտաճանաչողական, սոցիալական և հոգևոր արժեքներ, ռեկրեացիոն ռեսուրսներ) և աջակցող (հողագոյացում, ֆոտոսինթեզ, ազոտի, ածխածնի, թթվածնի, ջրի շրջանառություն) նշանակություն[2]:

- Հանդիսանում են բնակելի միջավայր տարբեր կենդանիների, բուսատեսակների և միկրոօրգանիզմների համար՝ ներառյալ մշակաբույսերի վայրի ցեղակիցների գենետիկ ռեսուրսներ: Կանխում են հողի էրոզիան, մեղմում են սողանքային երևույթները, հեղեղումները և երաշտը, կարգավորում են միկրոկլիման[3]:
- Հանդիսանում են ածխածնի բնական պահեստարան[3]:

Բնական կերհանդակները ունեն նաև գեղագիտական նշանակություն և հանդիսանում են հանգստի կազմակերպման վայր:

ՀՀ-ում բնական կերհանդակների կայուն կառավարման կարևորությունը գնահատելու նպատակով հաջորդիվ կներկայացվեն ՀՀ-ում գյուղատնտեսության, ներառյալ արոտավայրերի վերաբերյալ որոշ վիճակագրական տվյալներ և վերլուծական եզրահանգումներ: Մասնավորապես՝

- Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերից մեկը և տարիներ շարունակ պետական կառավարման մարմինները տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով խթանում են ոլորտի զարգացումը: Այդուհանդերձ, անասնապահության ոլորտն այսօր էլ բազում մարտահրավերներ ունի, որոնցից ամենանշանակալիցը անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճի ապահովումն է՝ ինտենսիվ եղանակով[3]:
- ՀՀ հողային ֆոնդի ավելի քան 68 տոկոսը (2 044 464,2 հա) հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր: Վերոնշյալ հողատեսքերի 51 տոկոսը կազմում են արոտավայրերը, իսկ 6 տոկոսը բնական խոտհարքները[4]: Ընդ որում, ըստ սեփականության ձևի համայնքային և պետական սեփականություն են հանդիսանում արոտավայրերի 97 տոկոսը, իսկ խոտհարքների 55 տոկոսը, իսկ մնացածը հանդիսանում են մասնավոր սեփականություն[5]:
- Բնական կերհանդակները հանդիսանում են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների կերի ապահովման հիմնական աղբյուր: Տարեկան

[2]Տեղեկատվությունը վերցրած է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագրերը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N 1059-Ա որոշում:

[3]Տեղեկատվությունը վերցրած է «ՀՀ արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրների և դրանց պատճառահետևանքային կապերը» (ՌԶԳ ՀԿ, 2019թ.) հետազոտությունից:

[4]«ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2019թ. հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03. 10. 2019թ. N 1379-Ն որոշում:

[5] ԱԳԿԿ, 2018թ. :

արտադրված մսի ավելի քան 50 տոկոսը, կաթի մոտ 70 տոկոսը և բրդի գրեթե 100 տոկոսը գոյանում է արոտային կերի օգտագործման արդյունքում[6]:

- 2019 թվականի հունվարի դրությամբ հանրապետությունում հաշվառված են 572 հազար գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, այդ թվում 254 հազարը՝ կովեր, ինչպես նաև 638 հազար գլուխ ոչխարներ և այծեր, 11 հազար ձի[7]:
- Տարբեր մարզերի բնական կերհանդակների և անասնագլխաքանակի (պայմանական խոշորի) քանակական համեմատությունը վկայում է, որ բոլոր մարզերը, բացի Արմավիրից և Երևան քաղաքից, չեն օգտագործում իրենց բնական կերհանդակների ողջ պոտենցիալը, այսինքն՝ ունեցած արոտավայրերը տարածքային տեսանկյունից երբեմն կրկնակի անգամ ավելի շատ են քան անհրաժեշտ է եղած անասնագլխաքանակի կերապահովման համար: Հարկ է նշել, որ հաշվարկում հաշվի չեն առնված դեգրադացված կամ ենթակառուցվածքներ չունեցող արոտավայրերի տարածքները և դրանց կողմից առաջադրված սահմանափակումները[8]:
- Հանրապետության արոտավայրերի շուրջ 57 տոկոսը դեգրադացված են: Հանրապետությունում առկա են 150 հազար հեկտար բնական կերհանդակներ, որոնք ենթակա չեն օգտագործման[8]:

Վերոնշյալ վիճակագրական տվյալները և վերլուծական եզրահանգումները ցույց են տալիս, որ չնայած հանրապետությունում առկա են բավականաչափ բարենպաստ տնտեսական վիճակում գտնվող բնական կերհանդակներ, այնուամենայնիվ դրանք չեն օգտագործվում իրենց ողջ պոտենցիալով: Միևնույն ժամանակ, հանրապետությունում առկա են մեծ քանակությամբ դեգրադացված բնական կերհանդակներ, ինչպես նաև բնական կերհանդակներ, որոնք ապահովված չեն անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Հարկ է նշվել, որ այսօր անասնապահության ոլորտում ամենամեծ մարտահրավերը հանդիսանում է անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճի ապահովումը՝ հիմնվելով ոչ թե անասնագլխաքանակի ավելացման, այլ՝ արտադրողականության բարձրացման վրա՝ կազմակերպելով արդյունավետ պահվածք և կերապահովում:

Այսպիսով, հաշվի առնելով բնական կերհանդակների տնտեսական, բնապահպանական և գեղագիտական նշանակությունը, և վերլուծելով վերոնշյալ վիճակագրական տվյալները և վերլուծական եզրահանգումները, ի հայտ է գալիս հանրապետությունում արոտավայրերի կայուն կառավարման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը և կարևորությունը:

2.2 Մոտեցումներ և մեթոդաբանություն

Այս բաժնում կներկայացվեն հայեցակարգի մշակման համար կիրառված մոտեցումները և մեթոդաբանությունը առանձին՝

- ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները վերլուծելու նպատակով,

[6] Բնապահպանության նախարարություն, 2014թ. :

[7] ԱՎԾ/ԱՎԿ, Վիճակագրական տարեգիրք 2019թ. :

[8] Տեղեկատվությունը վերցրած է «ՀՀ արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրների և դրանց պատճառահետևանքային կապերը» (ՌԶԳ ՀԿ, 2019թ.) հետազոտությունից:

- Տեղական և միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով, և
- ՀՀ-ում բնական կերհանդակների կայուն կառավարման համար արդյունավետ մեխանիզմների ներկայացման նպատակով:

Հայեցակարգի մշակման նպատակով ուսումնասիրված բոլոր փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հայեցակարգի «Գրականության ցանկ» բաժնում:

<u>ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտի ընդհանուր նկարագրի և առկա խնդիրների վերլուծություն</u>

ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ներկա վիճակի և առկա խնդիրների վերլուծությունն իրականացվել է շղթայականորեն միմյանց հետ փոխկապակցված 3 ոլորտների շրջանակներում՝



Օրենսդրական դաշտը և առկա խնդիրները վերլուծելու նպատակով ուսումնասիրվել են ՀՀ-ում գործող բոլոր այն օրենսդրական ակտերը, որոնք այս կամ այն չափով անդրադառնում են բնական կերհանդակների կառավարման վերաբերյալ հարցերին, ինչպես նաև այլ ակտերը, որոնք առհասարակ վերաբերում են՝

- Հողերի կառավարմանը,
- Շրջակա միջավայրի պահպանմանը,
- Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին և պարտականություններին,
- Հողերի կառավարման բնագավառում տարբեր լիազոր մարմինների վերահսկողական լիազորություններին:

Ինստիտուցիոնալ համակարգերի և պահանջվող ռեսուրսների ոլորտների ներկայիս վիճակի և առկա խնդիրների վերլուծության նպատակով հիմք են ընդունվել Հետազոտության արդյունքները:

Բացի վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը, իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբային հանդիպումներ և քննարկումներ սույն հայեցակարգի մշակման համար ձևավորված աշխատանքային խմբի անդամների հետ: Հանդիպումների ընթացքում շահառուներին ամփոփ ներկայացվել են բնական կերհանդակների կառավարման ոլորտում առկա խնդիրները և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկները: Արդյունքում, շահառուները հնարավորություն են ունեցել ներկայացնել իրենց դիրքորոշումները ոլորտում առկա խնդիրների և հնարավոր լուծումների վերաբերյալ, որոնք հիմք են հանդիսացել սույն Հայեցակարգի մշակման համար: Կից հավելվածներով ներկայացված են՝

- Աշխատանքային խմբում ներկայացուցիչներ ապահոված կառույցների ցանկ (Հավելված 1),
- Աշխատանքների ընթացքում անհատական հանդիպումներ իրականացրած շահառուների ցանկը (Հավելված 2),
- Անհատական հանդիպումների ընթացքում ներկայացված ոլորտում առկա խնդիրները և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկները (Հավելված 3),
- Աշխատանքային խմբի անդամների հետ ունեցած հանդիպումների արձանագրությունները (Հավելված 4):

<u>Տեղական և միջազգային փորձի ուսումնասիրություն</u>

Տեղական փորձի ուսումնասիրության համար հիմք է հանդիսացել Հետազոտությունում ներկայացված տեղեկատվությունը, մասնավորապես, պետության կողմից ոլորտում իրականացվող քաղաքականությունը և ծրագրերը, ինչպես նաև տեղական և միջազգային կառույցների կողմից իրականացված ծրագրերի փորձը և արդյունքները:

Ինչ վերաբերում է **միջազգային փորձի** ուսումնասիրությանը, ապա այս պարագայում դիտարկվել են և զարգացած, և զարգացող երկրներում առկա պրակտիկան, իրականացված ծրագրերը և բարեփոխումները, ոլորտում ունեցած հաջողությունները և քաղված դասերը: Մասնավորապես, դիտարկվել է հետևյալ երկրների փորձը՝

- Կենտրոնական Ասիայի երկրներ (Ղազախստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղրղզստան),
- Մոնղոլիա,
- Նիգերիա,
- Շվեյցարիա,
- Չինաստան:

<u>ՀՀ-ում բնական կերհանդակների կայուն կառավարման արդյունավետ մեխանիզմների ներկայացում</u>

ՀՀ-ում բնական կերհանդակների կայուն կառավարման արդյունավետ մեխանիզմների ներկայացման նպատակով համադրվել են՝

- Ոլորտում առկա բացահայտված խնդիրները,
- Տեղական և միջազգային փորձի վերլուծության եզրահանգումները,

- Աշխատանքային խմբի անդամների հետ հանդիպումների ընթացքում ոլորտի վերաբերյալ բացահայտված տեղեկատվությունը:

Արդյունքում, ոլորտի կայուն կառավարմանն առնչվող տարբեր բաղկացուցիչների համար հիմք են ընդունվել ինչպես տեղական, այնպես էլ միջազգային փորձը՝ ադապտացնելով դրանք ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ներկայիս պահանջներին:

3. ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները

3.1 Օրենսդրական դաշտը և առկա խնդիրները

ՀՀ-ում գոյություն չունի մեկ ամբողջական իրավական ակտ, որը կկարգավորի բնական կերհանդակների կառավարման հարցերը: Փոխարենը գործում են երկու իրավական ակտեր, որոնք վերաբերում են բացառապես բնական կերհանդակների օգտագործման և, որոշ չափով, կառավարման հարցերին և մասնակիորեն կարգավորում են այդ ոլորտը: Այդ փաստաթղթերն են՝

- ***«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին»*** ՀՀ կառավարության 28.10.2010թ. N 1477-Ն որոշում, և
- ***«ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին»*** ՀՀ կառավարության 14.04.2011թ. N 389-Ն որոշումը:

Միևնույն ժամանակ, հանրապետությունում գործում են մի շարք այլ իրավական ակտեր, որոնք որոշ չափով անդրադառնում են բնական կերհանդակների կառավարման վերաբերյալ հարցերին, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին, հողօգտագործման վերաբերյալ հարցերին: Այդ փաստաթղթերն են՝

- ՀՀ Հողային Օրենսգիրք,
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք,
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք,
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք,
- Այլ իրավական ակտեր:

Հաջորդիվ կներկայացվեն վերոնշյալ փաստաթղթերի կարգավորման ոլորտները:

«ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 14.04.2011թ. N 389-Ն որոշում: Փաստաթուղթը սահմանում է բնական կերհանդակների կառավարման և արդյունավետ օգտագործման կարգը, սակայն վերաբերում է բացառապես պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող բնական կերհանդակներին և որևէ անդրադարձ չի կատարում համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներին, ինչպես նաև մասնավոր սեփականությունում գտնվող բնական կերհանդակներին: Կարևոր է նշել, որ Կառավարությունը չունի իրավասություն կանոնակարգելու համայնքային կամ ֆիզիկական/իրավաբանական անձանց սեփականության օգտագործումը՝

համայնքային սեփականության օգտագործումը կարող է կարգավորվել միայն օրենքով: Փաստաթուղթը, մասնավորապես, սահմանում է՝

- Մինչև արոտավայրի օգտագործումը արոտավայրերի օգտագործման պլան կազմելու անհրաժեշտությունը,
- Արոտաշրջանառության սկզբունքները,
- Արոտային շրջանի տևողությունը հանրապետության տարբեր գոտիներում, ինչպես նաև ամբողջական բոլորապտույտներով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում,
- Արոտային թույլատրելի բեռնվածության հաշվարկման կարգը,
- Հերթափոխային արածեցման կիրառման սկզբունքները, որպես արածեցման արդյունավետ եղանակ,
- Արոտավայրերում մակատեղերի և ջրելատեղերի կառուցման ընդհանուր սկզբունքները,
- Բնական խոտհարքների կառավարման ընդհանուր կանոնները:

«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 28.10.2010թ. N1477-Ն որոշում: Փաստաթուղթը սահմանում է պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող բնական կերհանդակներից օգտվելու գործընթացը: Փաստաթուղթը, մասնավորապես, սահմանում է՝

- Բնական կերհանդակներից օգտվելու պայմանագրերի կնքման գործընթացը, համաձայն որի, պայմանագրերը կնքվում են պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով: Հարկ է նշել, որ մինչ վերոնշյալ որոշման ընդունումը պետական արոտավայրից օգտվելու համար անհրաժեշտ էր հողի օգտագործման պայմանագրի կնքում՝ ինչը առաջացնում էր նոտարական վավերացման և իրավունքի գրանցման հետ կապված լրացուցիչ ծախսեր:
- Բնական կերհանդակներից օգտվելու պայմանագրի օրինակելի ձևը, որը պետք է օգտագործվի նման պայմանագրեր կնքելիս:
- Բնական կերհանդակներից օգտվելու վճարի չափը, որը սահմանված է տվյալ բնական կերհանդակի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

ՀՀ Հողային Օրենսգիրք: Օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման: Օրենսգիրքն անդրադառնում է գյուղատնտեսական նշանակության հողերի, այդ թվում բնական կերհանդակների կառավարմանը վերաբերող որոշ հարցերի: Մասնավորապես՝

Հոդված	Հոդվածի մեկնաբանություն
Օրենսգրքի 9-րդ հոդված	Բնական կերհանդակները հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության հողեր: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսական հողերի, այդ թվում բնական կերհանդակների օգտագործման կարգը որոշում են հողամասի սեփականատերերը, օգտագործողները՝ հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման, հողերի օգտագործման սխեմաներին և հողաշինարարական այլ փաստաթղթերին ու նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: Ըստ այդմ, յուրաքանչյուր սեփականատեր, այդ թվում համայնք ինքը պետք է որոշի իր սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործման կարգը, որը պետք է համապատասխանի վերոնշյալ փաստաթղթերին և իրավական ակտերին:
Օրենսգրքի 55-րդ հոդված	Քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են: Ըստ այդմ, ըստ սեփականության իրավունքի ձևի, հողերը, այդ թվում գյուղատնտեսական նշանակության հողերը, կարող են հանդիսանալ քաղաքացիների, իրավաբանական անձանց, համայնքների կամ պետության սեփականությունը:
Օրենսգրքի 56-րդ հոդված	Համայնքի սեփականության ներքո գտնվող հողերը կառավարում և տնօրինում են համայնքի ղեկավարն ու ավագանին՝ Քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենսգրքով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
Օրենսգրքի 60-րդ հոդված	Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք զբաղեցված են համայնքի վարչական սահմաններից դուրս ընդհանուր օգտագործման արոտավայրերով, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով:
Օրենսգրքի 91-րդ հոդված	Գյուղատնտեսական նշանակության հողերը սեփականության կամ օգտագործման իրավունքով տրամադրվում են քաղաքացիներին և իրավաբանական անձանց այդ թվում նաև խոտհնձի և անասունների արածեցման նպատակով:
Օրենսգրքի 94-րդ հոդված	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության համար վարձավճարի նվազագույն չափը սահմանվում է տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափից ոչ պակաս:
Օրենսգրքի 96-րդ	Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող

հոդված	հողամասերից քաղաքացիներին և իրավաբանական անձանց գյուղատնտեսական գործունեության, այդ թվում խոտհնձի և անասունների արածեցման համար հողամասերը տրվում են վարձակալության՝ օրենսգրքով սահմանված ժամկետներով: Արոտավայրերը վարձակալությամբ տրամադրվում են անասնապահությամբ զբաղվելու պայմանով: Մեկ անասնագլխի համար անհրաժեշտ հողատարածքի նորմատիվը սահմանում է գյուղատնտեսության բնագավառի պետական լիազորված մարմինը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: Օրենքը սահմանում է ՀՀ-ում տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, համայնքի պարտադիր խնդիրները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Ըստ էության, Օրենքը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանող հիմնական փաստաթուղթ: Այն ուղղակի դրույթներ չի պարունակում բնական կերհանդակների վերաբերյալ, սակայն սահմանում է համայնքի ղեկավարի սեփական և/կամ պետության պատվիրակած լիազորությունները հողօգտագործման, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում: Մասնավորապես՝

Հոդված	**Մեկնաբանություն**
	Հողօգտագործման բնագավառ
Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մաս	Համայնքի ղեկավարը այս բնագավառում, ի թիվս այլ լիազորությունների, իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ • Մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա ծրագրի բաղկացուցիչ մասը և դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը: • Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: • Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները: • Իրականացնում է համայնքի սեփականություն

	հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ:
<u>Օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մաս</u>	Համայնքի ղեկավարը իրականացնում է պետության պատվիրակված հետևյալ լիազորությունները՝ • Օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը: • Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը: • Օրենքով սահմանված կարգով ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:
Գյուղատնտեսության բնագավառ	
<u>Օրենսգրքի 49-րդ հոդված</u>	Համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ • Կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը: • Համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում: • Իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: • Իրականացնում է գյուղատնտեսական զարգացման ծրագրեր, աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը:
Անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ	
<u>Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մաս</u>	Համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ • Լիազոր մարմնին տրամադրում է կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ

	հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն: • Ապահովում է անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը՝ համայնքը սպասարկող անասնաբույժի միջոցով:
<u>Օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մաս</u>	Համայնքի ղեկավարը այս բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները՝ • Աջակցում է անասնահակահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին: • Անասնահամաճարակային իրավիճակից ելնելով՝ ըստ վարակման ռիսկի, սահմանափակելով կամ արգելելով դրանց օգտագործումը աջակցում է անասնաբուժական ծառայության աշխատանքներին: • Աջակցում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներին: • Աջակցում է համայնքի տարածքում բուսասանիտարական հաշվառման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում բուսասանիտարիայի բնագավառի լիազոր մարմնին է տրամադրում հողօգտագործողների վերաբերյալ տվյալներ: • Աջակցում է համայնքի տարածքում հայտարարված կարանտին գոտում կատարվող աշխատանքներին:
Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ	
<u>Օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մաս</u>	Համայնքի ղեկավարը այս բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ • Կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:
<u>Օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մաս</u>	Համայնքի ղեկավարը այս բնագավառում իրականացնում է պետության պատվիրակված հետևյալ լիազորությունները՝ • Օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ: • Ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, արտադրական և կենցաղային թափոններով աղտոտումից:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք: Օրենքով սահմանվում են հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Մասնավորապես, համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի, հողերի պահպանության և օգտագործման նկատմամբ իրենց իրավասությունների շրջանակներում վերահսկողություն իրականացվում է երեք մակարդակում՝

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքով սահմանված՝ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինը: Համաձայն ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշման այդ մարմինը հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:
- Մարզպետներ:
- Համայնքների ղեկավարներ:

Վերահսկող մարմին	Վերահսկողության շրջանակներ
Մասնագիտական հսկողության բարձրագույն մարմին	Վերջինս վերահսկողություն է իրականացնում՝ • Հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ: • Հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: • Տարածքային կառավարման մարմինների՝ հողային հարաբերությունների բնագավառում իրականացնող գործունեության նկատմամբ: • Նոր հողերի յուրացման նկատմամբ: Ինչպես նաև իրավասու են նշանակել վարչական տույժեր բացահայտված անհամապատասխանությունների դեպքում:
Մարզպետը	Մարզպետը վերահսկողություն է իրականացնում՝ • Հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ: • Համայնքների հողերի գոտիավորման օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի, գոտիավորման նախագծերի իրականացման նկատմամբ: • Համայնքների վարչական սահմաններում պետական և համայնքային սեփականության հողամասերի տրամադրման, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հողի հարկերի գանձման նկատմամբ, կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները համայնքների վարչական

	սահմաններից դուրս գտնվող տարածքներում, իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով մարզի համայնքների պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակում է վարչական տույժեր: • Մարզի տարածքում հանրապետական և տարածքային հողաշինարարական նախագծերի իրականացման նկատմամբ: • Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: • Մարզի վարչական սահմանների սահմանանիշերի, համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանների և կետերի պահպանման նկատմամբ:
<u>Համայնքների ղեկավարները</u>	Համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում վերահսկողություն է իրականացնում՝ • Հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները համայնքի վարչական սահմաններում և օրենքով սահմանված կարգով ապահովում դրանց հետևանքների վերացումը, իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում է վարչական տույժեր: • Հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ: • Հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման նկատմամբ: • Համայնքի վարչական սահմանների սահմանանիշերի, հողօգտագործման սահմանների և գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանների և կետերի պահպանման նկատմամբ:

<u>«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք:</u> Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում: Մասնավորապես՝

Հոդված	Հոդվածի մեկնաբանություն
Օրենքի 12-րդ հոդված	Բուսական աշխարհի պետական մոնիտորինգն իրականացվում է բուսական աշխարհի պահպանության և շարունակական օգտագործման կազմակերպման նպատակով: Մոնիտորինգ է կազմակերպվում նաև բույսերի աճելավայրերի և էկոհամակարգերի վիճակի վերաբերյալ:
Օրենքի 13-րդ հոդված	Հոդվածը սահմանում է բուսական աշխարհի պետական հաշվառման և կադաստրի վարման անհրաժեշտությունը, որի նպատակն է բացահայտելու բուսական տեսակների ու համակեցությունների, դրանց աճելավայրերի քանակական և որակական փոփոխությունները: Համաձայն Օրենքի Բուսական աշխարհի պետական հաշվառումն իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան տասը տարին մեկ անգամ:
Օրենքի 16-րդ հոդված	Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության են ենթակա բուսական աշխարհի բոլոր օբյեկտները:
Օրենքի 18-րդ հոդված	Բուսական աշխարհի օբյեկտների պաշտպանության նպատակով արգելվում է՝ • Հրկիզումը, • Հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների չկանոնակարգված օգտագործումը, • Բուսատեսակների ապօրինի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն, կլիմայավարժեցումը և սելեկցիոն նպատակով օգտագործումը, • Կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ինքնակամ օգտագործումը, • Բնակավայրերում կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացված պահանջների խախտումը:
Օրենքի 27-րդ հոդված	Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործողը, ի թիվս այլ միջոցառումների, պարտավոր է՝ • Ապահովել բուսական աշխարհի՝ իրեն հատկացված օբյեկտների պահպանությունը, • Չխախտել բնական բուսական համակեցությունների ամբողջականությունը, • Իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ բուսական աշխարհի օբյեկտների վերարտադրության և պաշտպանության նպատակով, Աջակցել պետական մարմինների գործունեությանը՝ բուսական աշխարհի օբյեկտների հսկողության, պետական հաշվառման

	և մոնիտորինգի իրականացման համար:

Այլ իրավական ակտեր: Բացի վերոնշյալ փաստաթղթերից, առկա են նաև մի շարք այլ փաստաթղթեր, որոնք անդրադառնում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին առհասարակ հողերի կառավարման և բնապահպանական գործընթացների հետ կապված, սակայն քանի որ ուղղակի չեն վերաբերում բնական կերհանդակների կառավարմանը, այս հայեցակարգի շրջանակներում մանրամասն չեն ներկայացվում: Այդ փաստաթղթերն են՝

- ՀՀ Սահմանադրություն,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
- ՀՀ ջրային օրենսգիրք,
- ՀՀ անտառային օրենսգիրք,
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք,
- ՀՀ հարկային օրենսգիրք,
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք,
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք:

Օրենսդրական դաշտում առկա խնդիրները: Ինչպես նշվեց, հանրապետությունում գոյություն չունի մեկ միասնական փաստաթուղթ, որը կկարգավորի բնական կերհանդակների կառավարման ամբողջ գործընթացը: Ոլորտը կարգավորող միակ փաստաթղթերը կառավարության համապատասխան որոշումներն են՝ *«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին», 28.10.2010թ. N 1477-Ն, և «ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին», 14.04.2011թ. N 389-Ն,* որոնց մասով անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ խնդիրները՝

- Փաստաթղթերը կարգավորում են բացառապես պետական սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործման և կառավարման գործընթացները, իսկ համայնքային ղեկավարներին փաստաթուղթը միայն առաջարկում է համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործումն իրականացնել որոշման պահանջների համաձայն: Ըստ այդմ, բաց է մնում համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործման և կառավարման վերաբերյալ հարցերը և կիրառվում է ոչ միասնական մոտեցում բնական կերհանդակների կառավարման հարցում՝ ելնելով դրանց սեփականության ձևից: Սա նաև անդրադառնում է բնական կերհանդակների օգտագործման պայմանագրային հարաբերություններին: Քանի որ համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների պարագայում առկա չեն պայմանագրային պահանջներ, արդյունքում հանդիպում են դեպքեր, երբ համայնքի ավագանին որոշում է կայացնում համայնքամերձ բնական կերհանդակների համար վարձավճար չգանձել և թույլատրել ազատ արածեցում: Այնուամենայնիվ, խնդրի լուծման համար ուղիներ առաջարկելիս,

պետք է հաշվի առնել, որ Կառավարությունը չունի իրավասություն կանոնակարգելու համայնքային սեփականության օգտագործումը՝ համայնքային սեփականության օգտագործումը կարող է կարգավորվել միայն օրենքով: Բացի այդ, համայնքը, որպես իրավաբանական անձ ազատ է տնօրինելու իր սեփականությունը և անհատույց օգտագործման իրավունքով արոտավայր տրամադրելու արգելքը, նույնիսկ եթե դա առաջարկվի օրենքով կարող է խնդրահարույց լինել Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

- Փաստաթղթերն ընդունվել են համապատասխանաբար 2010 և 2011 թվականներին և դրանից հետո երբևէ չեն վերանայվել, ինչը ենթադրում է, որ ժամանակին սահմանված բնական կերհանդակների կառավարման սկզբունքները կարող են ներկայումս կիրառելի չլինել:
- *«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ* կառավարության *14.04.2011թ. N 389-Ն* որոշման համաձայն պետական սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ բնական կերհանդակների տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար: Սա առաջացնում է հետևյալ խնդիրները՝
  - Առաջին հերթին այս դրույթը սահմանափակում է կիրառել Հողային Օրենսգրքով թույլատրված հողի հարկի դրույքաչափից ավել գանձումը, քանի որ համաձայն Հողային Օրենսգրքի պետական սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափից ոչ պակաս:
  - Արոտավայրի տակ գտնվող հողի կադաստրային արժեքը վերջին անգամ փոփոխվել է 2007 թվականին, ինչի հետևանքով առկա են դեպքեր, երբ հողի հարկի դրույքաչափին համապատասխան սահմանված վճարները չեն համապատասխանում բնական կերհանդակների փաստացի վիճակով պայմանավորված իրական արժեքին:
- Որպես ոլորտը կարգավորող միակ փաստաթղթեր, դրանք շատ ընդհանրական են գրված, սահմանելով միայն ընդհանուր սկզբունքներ, ինչը կարող է հանգեցնել տարբեր համայնքների կողմից բնական կերհանդակների կառավարման տարբեր սկզբունքների կիրարկմանը: Օրինակ՝ սահմանված չեն տեղական և ազգային մակարդակում բնական կերհանդակների կառավարման ոլորտում պատասխանատու մարմինների լիազորությունները և պատասխանատվության շրջանակները, մոնիտորինգի իրականացման պահանջները և այլն:

ՀՀ Հողային Օրենսգիրքն իրականացնում է հողերի դասակարգումն ըստ իրենց նշանակության, սահմանում է հողերի սեփականության ձևերը, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողերի, ներառյալ արոտավայրերի օգտագործման և վարձակալության տրամադրման սկզբունքները: Այնուամենայնիվ, փաստաթուղթը ուղղակիորեն չի անդրադառնում բնական կերհանդակների կառավարման գործընթացներին: Միևնույն ժամանակ, Օրենսգիրքը չի արգելում քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել համայնքի վարչական սահմաններում

գտնվող արոտավայրերը, ինչն ըստ էության ենթադրում է, որ այդ արոտավայրերը կարող են սեփականաշնորհվել քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից: Դա սակայն չի ներառում օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց (բացառությամբ ՀՀ կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանցից), ովքեր չեն կարող արոտավայր հանդիսացող հողամասի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողի օգտագործողներ/վարձակալներ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված արգելքը՝ կապված համայնքի վարչական սահմաններից դուրս տրվող հողամասերի սեփականաշնորհման հետ, այլևս կիրառելի չէ, քանի որ համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի, այլևս գոյություն չունեն համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասեր:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ընդհանուր հողօգտագործման, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության բնագավառում, իսկ *«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին»* ՀՀ օրենքը տարբեր լիազոր մարմինների վերահսկողության ոլորտները հողօգտագործման բնագավառում: Այնուամենայնիվ, կրկին փաստաթղթերը շատ ընդհանրական են և կոնկրետ անդրադարձ չեն կատարում բնական կերհանդակների կառավարմանն առնչվող հարցերին:

3.2 Ինստիտուցիոնալ համակարգերը և առկա խնդիրները

Գործող ինստիտուցիոնալ համակարգեր: Ինչպես նշվեց «Հայեցակարգի նպատակների սահմանում» բաժնում բնական կերհանդակները՝ մասնավորապես գործառնական նշանակությամբ արոտները հիմնականում հանդիսանում են համայնքային և պետական սեփականություն, և համաձայն գործող օրենսդրական կարգավորումների բնական կերհանդակների կառավարման և տնօրինման համար պատասխանատու են ՏԻՄ-երը: Ըստ այդ, ՏԻՄ-երի կողմից պետք է իրականացվեն բնական կերհանդակների կայուն կառավարմանն ուղղված որոշակի գործառույթներ, մասնավորապես, ՏԻՄ-երը, համաձայն *«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին»* ՀՀ կառավարության *14.04.2011թ. N 389-Ն,* որոշման, պետք է՝

- Սահմանեն արոտային շրջանի սկիզբը և ավարտը,
- Կանոնակարգեն համայնքներում բնական կերհանդակների օգտագործման եղանակները,
- Սահմանեն բնական կերհանդակների հանգստի ժամկետներ վերջիններիս վերականգնման նպատակով,
- Վերահսկեն արոտօգտագործողների կողմից բնական կերհանդակների օգտագործման պայմանների և կարգի պահպանումը:

Հաջորդիվ կներկայացվեն Հետազոտության շրջանակներում իրականացված հարցազրույցների, ֆոկուս խումբ քննարկումների և հավաքագրված քանակական տվյալների վերլուծության ամփոփ արդյունքները, որոնք ցույց կտան համայնքներում գործող ինստիտուցիոնալ համակարգերի ընդհանուր պատկերը:

Հետազոտության շրջանակներում բարձրացված հարցեր	**Պատասխանների/վերլուծությունների ամփոփ ներկայացում**
Որքանով է վերահսկվում արոտօգտագործման գործընթացը ՏԻՄ-երի կողմից	• Վերահսկում չի իրականացվում՝ հարցման մասնակիցների 30,1 տոկոս, • Իրականացվում է մասամբ՝ մասնակիցների 58,8 տոկոս, • Ամբողջությամբ վերահսկվում է՝ 11,1 տոկոս:
Արոտների կառավարման ոլորտում ինչպիսի մասնագիտական ուղղորդումներ են ապահովում ՏԻՄ-երը	• ՏԻՄ-երը ուղղորդում չեն ապահովում՝ 39,3 տոկոս, • Սահմանում են արոտային շրջանի սկիզբ և ավարտ՝ 29,4 տոկոս: Մյուս պատասխանները բաշխվել են մասնագիտական այլ 5 ուղղորդումների միջև՝ ցածր տոկոսային արտահայտումներով:
Որքանով են ՏԻՄ-երի կողմից իրականացվում արոտների վիճակի վերահսկում	Չի իրականացվում, կամ իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ վարձակալության պայմանագրեր կնքելիս:
Արդյոք համայնքներում առկա է արոտավայրերի կառավարման պլան	• Հարցմանը մասնակցած համայնքների և բնակավայրերի 31 տոկոսում է առկա կառավարման պլան: • Որոշ համայնքներ ավագանու որոշմամբ ընդունել են իրենց համայնքների արոտավայրերի օգտագործման կարգեր, որը հանդիսանում է «ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 14.04.2011թ. ***N*** 389-Ն որոշման արտատպումը և իրենց բնույթով վերացական փաստաթղթեր են: • Հիմնականում կառավարման պլաններ առկա են այն համայնքներում, որտեղ իրականացվել են բնապահպանության կամ անասնապահության զարգացմանն ուղղված ծրագրեր:

	• Կառավարման պլանները հիմնականում չեն թարմացվում և դրանց առկայությունը չի ենթադրում վերջիններիս կիրառում:
<u>Ինչպես է իրականացվում կենդանիների արածեցման գործընթացը</u>	Գործընթացը համայնքից համայնք տարբեր է և պայմանավորված է նախրապան ունենալու, անասնատերերի՝ անասնաբուծության մեջ մասնագիտացած լինելու հանգամանքով: Մասնավորապես՝ • Համայնքներում հիմնականում կիրառվում է արոտավայրերի օգտագործման ազատ եղանակը, • Հերթափոխ-արոտաբաժնային եղանակով արածեցումը քիչ դեպքերում է կատարվում:
<u>Ինչպես են օգտագործվում համայնքամերձ և հեռագնա արոտավայրերը</u>	Հարցմանը մասնակցած 80 և ավել տոկոս համայնքներում օգտագործվում են համայնքամերձ արոտավայրերի 50 տոկոսից ավելին: Նույն համայնքների 82 տոկոսում օգտագործվում են հեռագնա արոտավայրերի 50 տոկոսից պակասը: **Համայնքամերձ արոտների հասանելիությունը սահմանափակող հիմնական պատճառները ըստ համայնքների՝** • Նախիրների և հոտերի համար խմելաջրերի պակասը՝ 73,9 տոկոս, • Արոտ տանող ճանապարհների քայքայված և դժվար անցանելի լինելը՝ 69,6 տոկոս, • Արոտավայրերի ռելիեֆային լինելը՝ 43,5 տոկոս, • Արոտավայրերի դեգրադացված լինելը՝ 29,6 տոկոս: **Հեռագնա արոտների հասանելիությունը սահմանափակող հիմնական պատճառները ըստ համայնքների՝** • Արոտ տանող ճանապարհների քայքայված և դժվար անցանելի լինելը՝ 74,5 տոկոս, • Ճամբարային ենթակառուցվածքների քայքայված վիճակը կամ բացակայությունը՝ 66 տոկոս,

	• Կիթ իրականացնելու, կաթը վերամշակելու կամ համայնք տեղափոխելու հնարավորությունների պակաս՝ 67 տոկոս, • Համայնքից մեծ հեռավորության վրա գտնվելը և առանձին տնային տնտեսությունների ունեցած կենդանիների փոքր թվով պայմանավորված հեռագնա արոտավայրում կենդանիների արածեցման տնտեսական առումով արդարացված չլինելը՝ համապատասխանաբար համայնքների 56,6 և 49,1 տոկոս:
Ինչ վիճակում են գտնվում արոտօգտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները	• Համեմատած լավ վիճակում են գտնվում ջրելատեղերը և ճանապարհները: • Մակատեղերի և հովվի կացարանների վիճակը վատ է կամ բացակայում է հարցմանը մասնակցած համայնքների համապատասխանաբար՝ 83,3 և 82,7 տոկոսի մոտ: Ընդ որում՝ համայնքամերձ արոտավայրերի ճանապարհները և ջրելատեղերը ավելի լավ վիճակում են, քան հեռագնա արոտավայրերինը:
Արդյոք համայնքի վարչական տարածքում առկա արոտները բավարարում են համայնքում հաշվառված անասնագլխաքանակիարոտային կերի պահանջը	• Արոտավայրերը բավարարում են համայնքում հաշվառված անասնագլխաքանակին՝ համայքների 52 տոկոս, • Արոտավայրերը չեն բավարարում համայնքում հաշվառված անասնագլխաքանակին՝ 18 տոկոս և սրանցից 20 տոկոսի դեպքում չկա հնարավորություն օգտվել այլ համայնքների արոտավայրերից:

Ինստիտուցիոնալ համակարգերում առկա խնդիրներ
Տեղական ինքնակառավարման մարմինների ոչ լիարժեք ինստիտուցիոնալ կայացվածություն
Բնական կերհանդակների կայուն կառավարման հիմնական խնդիրներից է հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կայացվածության ցածր մակարդակը: Մասնավորապես՝

- Համայնքներում բացակայում է բնական կերհանդակների կառավարման գործընթացի հստակ ինստիտուցիոնալ ձևաչափ և կառուցվածք, արդյունքում գործընթացը համայնքից համայնք տարբերվում է:
- ՏԻՄ-երը չեն գիտակցում իրենց վրա դրված պարտականությունները և չեն ձեռնարկում բնական կերհանդակների կառավարմանն ուղղված աշխատանքներ՝ ենթադրելով որ շատ գործառույթներ հանդիսանում են պետության կամ անասնատիրոջ պարտականությունները: Օրինակ, արոտավայրում խմոցի վերականգնման հետ կապված աշխատանքները:
- ՏԻՄ-երի համար բնական կերհանդակների կառավարումը համեմատած համայնքի մյուս խնդիրների հետ (խմելու ջրի բացակայություն, հասարակական տրանսպորտ և այլն) չի հանդիսանում առաջնային խնդիր:
- ՏԻՄ-երում բացակայում են անհրաժեշտ մասնագետների հաստիքները՝ գյուղատնտես, անասնաբույժ, հողաշինարար, ինչպես նաև հանդապահ: Արդյունքում, որոշ դեպքերում կառավարման գործընթացի միակ պատասխանատուն, առանց անհրաժեշտ գործիքակազմի, հանդիսանում են համայնքի ղեկավարը և նրա տեղակալը, ինչի պարագայում անհնար է իրականացնել պատշաճ կառավարում:
- Համայնքների խոշորացման գործընթացը, որոնք ձեռնարկվել են վերջին տարիներին, դեռևս ամբողջությամբ չեն ընկալվել խոշորացված համայնքների բնակիչների կողմից բնական կերհանդակների կառավարման տեսանկյունից: Արդյունքում, շատ դեպքերում համայնքների բնակիչների կողմից պահպանվում են նախկին համայնքների արոտավայրերի նախկին սահմանները: Միևնույն ժամանակ, իրականացված խոշորացումների արդյունքում համայնքների կողմից կազմած բնական կերհանդակների կառավարման պլանները չեն վերանայվել և ադապտացվել խոշորացված համայնքներին համապատասխան:

Նշենք նաև, որ աշխատանքային խմբի հետ քննարկումների ընթացքում բարձրացվեց այն հարցը, որ մասնավոր սեփականություն հանդիսացող արոտավայրերը հաճախ պատշաճ կերպով չեն օգտագործվում, ինչը հանգեցնում է վերջիններիս դեգրադացմանը: Որպես հիմնական պատճառ նշվեց վերահսկողական մեխանիզմների թերի լինելը:

Համայնքների միջև համագործակցության համար անհրաժեշտ գործիքակազմի և ձևաչափերի բացակայություն

Մեկ այլ ինստիտուցիոնալ խնդիր է համայնքների միջև բնական կերհանդակների համատեղ օգտագործման և կառավարման տեսանկյունից համագործակցության պակասը: Մասնավորապես, կան համայնքներ, որտեղ բնական կերհանդակները շատ ավելի շատ են, քան առկա անասնագլխաքանակը և հակառակը: Ուստի, այստեղ համայնքների միջև համագործակցությունը կհանգեցներ իրենց համայնքի բնական կերհանդակների փոխշահավետ օգտագործմանը և կայուն կառավարմանը:

Տեղեկատվական հոսքերի բացակայություն

Մինչ օրս հանրապետությունում իրականացված չէ բնական կերհանդակների գույքագրում: Ըստ այդմ, հայտնի չէ, թե հանրապետությունում, որպես արոտավայր հաշվառված 1 051,1 հեկտար հողատեսքերի՝

- Որ մասն է օգտագործման համար պիտանի արոտավայր,
- Որ մասն է կազմում դեգրադացված, քարքարոտ, կտրատված ռելիեֆով տարածքներ,
- Որ համայնքում ինչ թեքությունների վրա են գտնվում արոտավայրերը,

• Ինչ ենթակառուցվածքներ կան և ինչ վիճակում են գտնվում: Միևնույն ժամանակ, հանրապետությունում չի իրականացվում բնական կերհանդակների պատշաճ մշտադիտարկում, ըստ այդմ ազգային, մարզային և համայնքային մակարդակում բնական կերհանդակների վերաբերյալ որոշումների կայացման համար առկա չէ հուսալի և լիարժեք տեղեկատվություն:
Բնական կերհադակների՝ արոտավայրերի կառավարման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն
Բոլոր համայնքներում առկա է ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ: Մասնավորապես՝ • Ջրելատեղերի բացակայություն, ինչն անհնար է դարձնում ամռան ամիսներին կենդանիների պահվածքը արոտավայրում: Սրա հետ մեկտեղ արոտավայրի տարածքի համեմատ ջրելատեղերի սակավությունը բերում է ջրելատեղերին մոտիկ արոտավայրերի տարածքի դեգրադացման, քանի որ այդ հատվածում է կուտակվում հիմնական անասնագլխաքանակը: • Ճանապարհների բացակայություն/անբարեկարգ վիճակ, ինչը հանգեցնում է նրան, որ կենդանիները երկար ժամանակ և շատ էներգիա են ծախսում արոտավայր հասնելու և վերադառնալու համար, իսկ մյուս կողմից բարդանում է կուտակված կաթի տեղափոխումը, նախրապանի հետ հաղորդակցումը, արտակարգ իրավիճակներում սահմանափակ են արագ արձագանքելու հնարավորությունները և այլն: • Ճամբարային ենթակառուցվածքների՝ մակատեղերի, հովվի կացարանների քայքայված վիճակը կամ բացակայությունը, ինչպես նաև կիթ իրականացնելու և կաթը պահպանելու ու վերամշակելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ:

3.3 Պահանջվող ռեսուրսները և առկա խնդիրները

Պահանջվող ռեսուրսների առկայություն: Բնական կերհանդակների կայուն կառավարման համար պահանջվող ռեսուրսներն են՝

- Մարդկային ռեսուրսներ,
- Անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ,
- Ֆինանսական ռեսուրսներ:

Հաջորդիվ կներկայացվեն յուրաքանչյուր ռեսուրսի մասով ներկայիս վիճակը համայնքներում:

Պահանջվող ռեսուրս	Ներկա վիճակ
Մարդկային ռեսուրսներ	• ՏԻՄ-երի աշխատակազմում չի պահանջվում ունենալ ագրոնոմի, հողաշինարարի կամ բնական կերհանդակների օգտագործման և կառավարման հետ առնչություն ունեցող որևէ այլ մասնագետի հաստիք: Ըստ այդմ, բնական կերհանդակների կառավարման ամբողջ գործընթացն իրականացվում է համայնքի ղեկավարը և նրա տեղակալը: • Հանդապահի հաստիք կա շատ քիչ համայնքներում,

	որտեղ հանդապահի գործառույթը հանդիսանում է արոտների կառավարման գործընթաց վերահսկելը, ուղղորդելը, ինչպես նաև ցանքատարածքներն ու խոտհարքային տարածքների պահպանությունն ապահովելը: Որոշ համայնքներում հանդապահի գործառույթները սահմանափակվում են այլ համայնքներից կենդանիների մուտքի կանխումով տվյալ համայնք:
Գիտելիքներ և հմտություններ	Հետազոտության շրջանակներում մասնակիցները գնահատել են բնական կերհանդակների կառավարման վերաբերյալ հետևյալ գիտելիքների անհրաժեշտությունը՝ • Արոտավայրի կայուն կառավարում, • Արոտավայրի կառավարման պլանի մշակում, • Մսուրային պահվածքի արդյունավետ կազմակերպում և կերապահովման խնդրի լուծում, • Կենդանիների արդյունավետ արածեցման կազմակերպում: Առաջարկված բոլոր թեմաների վերաբերյալ հարցվածների 50-53 տոկոսը գիտելիքի կարիք են զգացել: Ընդ որում, ընտանեկան գյուղացիական տնտեսությունների համեմատ ՏԻՄ ներկայացուցիչների և մասնագետների ավելի մեծ մասն է համարել, որ նշված բոլոր թեմաների վերաբերյալ գիտելիքի կարիք ունի:
Ֆինանսական ռեսուրսներ	Համայնքներում բնական կերհանդակների կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված բյուջետային հատկացումները վերլուծելու համար ուսումնասիրվել են ՏԻՄ-երի բյուջեի ձևավորման վերաբերյալ համապատասխան օրենսդրական ակտերը՝ • «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, համաձայն որի համայնքային բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրներն են հարկային եկամուտները, տուրքերը, այլ եկամուտները, այդ թվում՝ համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցները, պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումները, համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները: • «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, համաձայն որի ՏԻՄ-երի բյուջեներում առկա են հստակ սահմանված ծախսային ուղղություններ, որոնցում սակայն առկա չէ բնական կերհանդակների վերաբերյալ առանձին դրույթներ: Այնուամենայնիվ,

	առկա է առանձին ծախսային ուղղություն գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության և ձկնաբուծության համար: Ուսումնասիրվել է նաև 2018 թվականի ընթացքում բնական կերհանդակներից ստացված և դրանց ուղղված ծախսերի մասնաբաժինը ՀՀ համայնքների բյուջեների մուտքերում և ելքերում: Արդյունքում պարզվել է, որ չնայած բնական կերհանդակների օգտագործումից ստացված եկամուտները համայնքային բյուջեի փոքր մասն են կազմում, սակայն նույն բյուջեից գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության և ձկնաբուծության համար կատարված ծախսերը շատ ավելի քիչ են ստացված եկամուտներից: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ անասնապահությամբ հիմնականում զբաղվում են փոքր անասնատերերը, որոնք շատ դեպքերում հրաժարվում են արոտօգտագործման համար պայմանագրեր կնքել և չեն վճարում վարձավճարներ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այս խմբի արոտօգտագործման կարգավորումը ենթադրում է համայնքում սոցիալական խնդիրների խորացում, ինչը կարող է հանգեցնել լրացուցիչ արտագաղթի և աղքատության: Սակայն, փոքր և մեծ անասնատերերի հանդեպ վարձավճարների գանձման երկակի մոտեցումները հանգեցնում է նրան, որ խոշոր անասնատերերը սկսում են հրաժարվել վարձավճար վճարելուց:

Պահանջվող ռեսուրսների հետ կապված խնդիրներ
Մարդկային ռեսուրսների սակավություն
Տեղական ինքնակառավարման մարմիններում առկա չեն բավարար քանակությամբ մասնագետներ բնական կերհանդակների կառավարման գործընթացի պատշաճ կազմակերպման համար:
Անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների պակաս
Բնական կերհանդակների կայուն կառավարման կարևորագույն գործոններից է համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայությունը: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ և ՏԻՄ ներկայացուցիչները, և գյուղացիական ընտանեկան տնտեսություններն զգում են բնական կերհանդակների կառավարման համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների պակաս:
Ֆինանսական ռեսուրսների սակավություն
Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ՏԻՄ-երը գրեթե միշտ ունեն ֆինանսական միջոցների սղություն բնական կերհանդակների կայուն կառավարման

աշխատանքների իրականացման համար:

4. Բնական կերհանդակների՝ արոտների կառավարման միջազգային և տեղական փորձը

4.1 Արոտների կառավարման միջազգային փորձ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը հանգեցրեց բնական կերհանդակների կառավարման վերաբերյալ հետևյալ եզրահանգումների՝

- ՀՀ-ում արոտավայրերի կառավարման հետ կապված խնդիրները հիմնականում բնորոշ են նաև Կենտրոնական Ասիայի երկրներին:
- Արոտների կառավարման ոլորտում հիմնական խնդիրները խմբավորված են հետևյալ հարցերի շուրջ՝
  - Սեփականության իրավունքի ձև,
  - Կառավարման համակարգեր,
  - Վարձակալության տրամադրման մեխանիզմներ,
  - Վարձավճարների գանձման մեխանիզմներ:

4.2 Արոտների կառավարման տեղական փորձ

ՀՀ-ում արոտների կառավարման ոլորտում իրականացվել են տարբեր ծրագրեր հետևյալ կառույցների կողմից՝

- ՀՀ Կառավարություն՝ ի դեմս Գյուղատնտեսության նախարարության,
- Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ,
- ՄԱԿ-ի զարգացման գրասենյակ,
- Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակներում գրանցվել են հետևյալ արդյունքները՝

- Հիմնադրվել են հանձնաժողովներ և կոոպերատիվները,
- Աջակցություն է տրամադրվել համայնքներին՝ մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ և անցկացվել են այդ պլանների մշակման և գործարկման վերաբերյալ դասընթացներ,
- Իրականացվել են արոտավայրերի ջրարբիացում,
- Իրականացվել է դեգրադացված արոտների վիճակի գնահատում և մշակվել է վերականգմանն ուղղված ծրագրեր,
- Տրամադրվել են տեխնիկական աջակցություններ,
- Կառուցվել և նորոգվել են արոտային ենթակառուցվածքներ,
- Կազմակերպվել են թեմատիկ դասընթացներ,
- Մշակվել են կառավարման պլան կազմելու և մոնիտորինգի իրականացման ուղեցույց և ձեռնարկ, ինչպես նաև դեգրադացված բնական կերհանդակների բարելավման ուղեցույցը,
- Իրականացվել են մարդկային կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ:

Սույն Հայեցակարգի կից հավելվածներում մանրամասն ներկայացված են՝

- Կենտրոնական Ասիայի երկրներում արոտների կառավարման ոլորտում առկա խնդիրները (Հավելված 5),
- Արոտավայրերի կառավարման տեղական փորձը (Հավելված 6),
- Ոլորտին բնորոշ խնդիրների լուծմանն ուղղված միջազգային փորձը (Հավելված 7):

5. ՀՀ-ում բնական կերհանդակների՝ արոտների կառավարման հնարավոր մեխանիզմները

Հաջորդիվ կներկայացվեն սույն Հայեցակարգի «ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները» բաժնում ներկայացված յուրաքանչյուր խնդրի համար առաջարկվող լուծումները, ինչպես նաև առաջարկվող լուծումների համար պահանջվող օրենսդրական փոփոխությունները (կիրառելիության դեպքում):

Օրենսդրական դաշտում առկա խնդիրները	
Համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործումը բավարար չի կարգավորվում համապատասխան իրավական փաստաթղթերով	
Առաջարկվող փոփոխություններ	Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, այնպես, որ և՛ պետական, և՛ համայնքային, և՛ մասնավոր սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործումը և կառավարումն իրականացվի մեկ միասնական մեխանիզմով: Սակայն, պետք է հաշվի առնել, որ մասնավոր և համայնքային արոտավայրերի հանդեպ կառավարման որոշակի մեխանիզմի պարտադրումն առաջացում է սահմանափակումներ, այն է՝ • Անձի սեփականության իրավունքը երաշխավորված է Սահմանադրության 60-րդ հոդվածով և դրա սահմանափակումները պետք է համապատասխանեն համաչափության սկզբունքին: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ սեփականաշնորհված արոտների վերաբերյալ որոշ ընդհանուր կարգավորումներ արդեն իսկ սահմանված են ՀՀ Հողային օրենսգրքով, մասնավորապես, հողն ըստ նպատակային նշանակության օգտագործելու պահանջը: Ուստի, անհրաժեշտության դեպքում կարող են նախատեսվել նաև լրացուցիչ պահանջներ՝ հողի վատթարացումը կանխելու նպատակով: Մասնավորապես, հնարավոր է դիտարկել ՀՀ հողային օրենսգրքով հողի գերծանրաբեռնումը բացառող սահմանափակումներ՝ լիազորելով ՀՀ կառավարությանը ընդունել նորմատիվներ՝ յուրաքանչյուր կարգի արոտի թույլատրելի ծանրաբեռնվածության վերաբերյալ, նորմեր նախատեսել՝ մասնավոր սեփականատերերին խրախուսելու չօգտագործվող արոտները արոտօգտագործման պլանի

	համաձայն այլ անձանց օգտագործման հանձնելը:
Պահանջվող օրենսդրական փոփոխություններ	Ինչպես արդեն նշել էինք խնդրի լուծման համար ուղիներ առաջարկելիս, պետք է հաշվի առնել, որ Կառավարությունը չունի իրավասություն կանոնակարգելու համայնքային և մասնավոր սեփականության օգտագործումը. համայնքային և մասնավոր սեփականության օգտագործումը կարող է կարգավորվել միայն օրենքով: Բացի այդ, համայնքը, որպես իրավաբանական անձ, մասնավորը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ազատ են տնօրինելու իրենց սեփականությունը, ինչն երաշխավորված է Սահմանադրության 60-րդ հոդվածով: Ուստի, համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների կառավարման կանոնակարգումը պետք է իրականացվի օրենքով, ու դրանով նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից (Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:»): Ելնելով վերոնշյալից առաջարկում ենք՝ • ՀՀ Հողային օրենսգրքով սահմանել և պետական, և համայնքային, և մասնավոր սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների կառավարման ընդհանուր սկզբունքները՝ այդ թվում՝ պետական և համայնքային բնական կերհանդակների համար վարձավճարների հաշվարկման սկզբունքներ, գործակիցներ և այլն, ինչպես նաև պետական և համայնքային մարմինների պարտականությունները: Օրենսգրքում պահանջվող փոփոխությունների մանրամասները կներկայացվեն հաջորդիվ՝ յուրաքանչյուր խնդրի համար առանձին: • Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 14.04.2011թ. N 389-Ն որոշումը: Որոշմամբ սահմանված ընդունելի սկզբունքները արտացոլել Հողային Օրենսգրքում, մասնավորապես՝ ➢Մինչև արոտավայրի օգտագործումը արոտավայրերի օգտագործման պլան կազմելու անհրաժեշտությունը, ➢Արոտաշրջանառության սկզբունքները,

	➢Արոտային շրջանի տևողությունը հանրապետության տարբեր գոտիներում, ինչպես նաև ամբողջական բոլորապտույտներով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում, ➢Արոտային թույլատրելի բեռնվածության հաշվարկման կարգը, ➢Հերթափոխային արածեցման կիրառման սկզբունքները, որպես արածեցման արդյունավետ եղանակ, ➢Արոտավայրերում մակատեղերի և ջրելատեղերի կառուցման ընդհանուր սկզբունքները, ➢Բնական խոտհարքների կառավարման ընդհանուր կանոնները: • Ուժը կորցրած ճանաչել «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 28.10.2010թ. N 1477-Ն որոշումը: Որոշմամբ սահմանված ընդունելի սկզբունքները արտացոլել Հողային Օրենսգրքում, մասնավորապես՝ ➢Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի կնքման ժամկետները, ➢Խոտհարքներից օգտվելու պայմանագրի օրինակելի ձևը, ➢Արոտավայրերից օգտվելու պայմանագրի օրինակելի ձևը, որը պետք է վերանայվի՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված արոտներից օգտվելու վարձավճարի գնագոյացման մեխանիզմը:
Արոտների օգտագործման վարձավճարի գնագոյացման մեխանիզմի հետ կապված կան անհամապատասխանություններ կառավարության համապատասխան որոշման և Հողային Օրենսգրքի մեջ, միևնույն ժամանակ սահմանված կադաստրային արժեքները ոչ միշտ են համապատասխանում արոտավայրի իրական տնտեսական արժեքին	
<u>Առաջարկվող փոփոխություններ</u>	Առաջարկվում է վերանայել արոտների օգտագործման վարձավճարի հաշվարկման մեխանիզմը, ինչպես նաև վճարման պարբերականությունը՝ • Վարձավճարը մեկ հեկտարի դիմաց գանձելու փոխարեն գանձել ըստ պայմանական խոշոր միավորի (ՊԽՄ) գլխաքանակի, որի դեպքում արոտօգտագործողները վճարումները կատարում են յուրաքանչյուր պայմանական խոշոր միավորի համար: Մասնավորապես, 1 ՊԽՄ-ի համար արոտի վարձավճարի հաշվարկի իրականացման համար պետք է հիմք ընդունել արոտի թույլատրելի բեռնավորման նորմը (ԱԹԲ), արոտից օգտվող անասնագլխի քանակային տվյալները (փոխակերպված ՊԽՄ-ի) և արոտի 1հա-ի հողի հարկի դրույքաչափը, որպեսզի պարզ դառնա նաև յուրաքանչյուր ՊԽՄ-ին

	անհրաժեշտ արոտային տարածքը արոտային ժամանակահատվածում, որի համար և գանձվելու է 1 գլուխ ՊԽՄ-ի համար արոտի վճարը: • Մեկ հեկտար արոտի վճարի հաշվարկման համար, որպես նվազագույն արժեք սահմանվում է տվյալ արոտային տարածքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափը, որն իր հերթին հաշվարկվում է հիմք ընդունելով կադաստրային արժեքը: Այն դեպքում, երբ կադաստրային արժեքը չի համապատասխանում արոտի տնտեսական վիճակին, ՏԻՄ-ը սահմանված կարգով և հիմնավորված առաջարկով պետք է դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ արոտի կադաստրային արժեքը փոփոխելու նպատակով: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երն իրավասու են փոփոխելու արոտի 1 հա-ի համար սահմանված նվազագույն արժեքը՝ հիմք ընդունելով նաև արոտի տնտեսական վիճակը, գտնվելու վայրը և կայուն արոտօգտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով ապահովվածությունը: • Վարձավճարների հաշվարկման համար առաջարկվում է հետևյալ բանաձևը՝ ***(ՊԽՄ: ԱԹԲ x 1հա-ի հողի հարկ) : ՊԽՄ*** ➢Օրինակ՝ համայնքում հաշվառված անասնագլխաքանակը կազմում է 100 ՊԽՄ, օգտագործվող արոտներում թույլատրելի բեռնավորման նորմը՝ ԱԹԲ-ն կազմում է 0,8 գլուխ/հա (ԱԹԲ = 0,8 գլուխ/հա), իսկ արոտների 1 հա-ի հողի հարկը կազմում է 1200 ՀՀ դրամ: Նման դեպքում 1 գլուխ ՊԽՄ-ի արոտի վարձը արոտային ամբողջ շրջանի համար կազմելու է՝ ***(100 ՊԽՄ : 0,8 ԱԹԲ x 1200դրամ) : 100 ՊԽՄ = 1500 դրամ*** ➢Հաշվարկով պարզ է դառնում, որ արոտային ժամանակահատվածում յուրաքանչյուր ՊԽՄ-ին անհրաժեշտ է 1,25 հա (1ՊԽՄ : 0,8ԱԹԲ) արոտային տարածք, որի համար և հաշվարկվել է 1500 ՀՀ դրամ (ՊԽՄ արոտի վճարը): Պետք է ի նկատի ունենալ, որ որքան ԱԹԲ-ի հաշվարկված արժեքը ցածր է ստացվում (պայմանավորված արոտի արտադրողականությամբ), այնքան ավելանում է 1 ՊԽՄ-ին անհրաժեշտ արոտային տարածքը և համապատասխան գանձվող վճարի չափը: ➢Վարձավճարը սահմանել ըստ արոտային շրջանի կամ արոտօգտագործման ժամանակահատվածի: Հստակ պետք է տարբերել արոտային շրջան և արոտօգտագործման ժամանակահատված

	սահմանումները: Շատ դեպքերում համայնքի վարչական տարածքում առկա արոտային տարածքները բավարարում են համայնքում հաշվառված անասնագլխի՝ ՊԽՄ-ի կերի պահանջը միայն մասամբ, օրինակ՝ 6 ամիս արոտային շրջանից միայն 3 ամիս ժամանակահատվածի համար: Նման դեպքում անասնագլխաքանակը որպես կանոն կրկնակի անգամ գերազանցում է ԱԹԲ-ի նորմին: Այս դեպքում, եթե ամբողջ անասնագլխաքանակը (200 գլուխ ՊԽՄ) 3 ամիս ժամանակահատվածով օգտվում է այդ արոտային տարածքներից (մինչև հեռագնա արոտներ, կամ այլընտրանքային կերապահովման տարածքներ տեղափոխվելը), ապա յուրաքանչյուր ՊԽՄ-ի համար հաշվարկվող արոտի վարձը նվազեցվելու է 50 տոկոսով՝ ***200 ՊԽՄ : 0,8 ԱԹԲ = 250(հա) x 1200(դրամ) : 200 ՊԽՄ x 50% = 750դրամ*** ➢Այսպիսով՝ 100 գլուխ ՊԽՄ-ն 6 ամիս արոտային շրջանում տվյալ արոտից օգտվելու դեպքում արոտօգտագործողը յուրաքանչյուր ՊԽՄ-ի համար պետք է վճարի 1500 ՀՀ դրամ, իսկ 200 գլուխ ՊԽՄ-ն 3 ամիս արոտային ժամանակահատվածում նույն արոտատեղամասից (125 հա) օգտվելու դեպքում արոտօգտագործողը 1ՊԽՄ-ի համար պետք է վճարի 750 ՀՀ դրամ: ➢Արոտավճարների գանձման համար կարող են սահմանվել ճկուն մեխանիզմներ: Օրինակ՝ տալ հնարավորություն գանձել ամսական վարձավճարներ, սահմանել ավելի ցածր ամսականացված գին ամբողջական արոտաշրջանի համար վարձավճարի միանգամից վճարման դեպքում:
<u>Պահանջվող օրենսդրական փոփոխություններ</u>	Առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ Հողային օրենսգրքում, սահմանելով՝ • Արոտային վարձավճարների հաշվարկման մեխանիզմը, • Արոտային վարձավճարների հավաքագրման մեխանիզմը, • Արոտավայրերից օգտվելու պայմանագրի օրինակելի ձևը, • Արոտային վճարներից գոյացած գումարների օգտագործման սկզբունքները (մանրամասները նկարագրված են ստորև), • Արոտային վարձավճարների սահմանման,

	հավաքագրման և օգտագործման համար լիազոր մարմինները (մանրամասները նկարագրված են ստորև):
Արոտավայրերի տակ գտնվող հողերի նպատակային նշանակության և հողատեսքերի փոփոխությունը, ինչպես նաև հողերի սեփականաշնորհման գործընթացները բավարար չափով կարգավորված չեն	
Առաջարկվող փոփոխություններ	Արոտների տակ գտնվող հողերի սեփականաշնորհման հետ կապված խնդրի լուծման նպատակով առաջարկվում է արգելել ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտների փոխանցումը: Ինչ վերաբերում է հողերի նպատակային նշանակության և հողատեսքերի փոփոխությանը, ապա այս խնդիրները դիտարկվում են սույն Հայեցակարգի մշակման աշխատանքների շրջանակներից դուրս և պահանջում են առավել համակարգային լուծումներ:
Պահանջվող օրենսդրական փոփոխություններ	Արոտային հողերի սեփականաշնորհման արգելքի հետ կապված առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ իրականացնել ՀՀ Հողային Օրենսգրքում:

Ինստիտուցիոնալ համակարգերի հետ կապված խնդիրներ	
Տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կայացվածություն	
Առաջարկվող փոփոխություններ	ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ կայացվածության բարելավման նպատակով առաջարկվում է ներդնել հստակ ինստիտուցիոնալ ձևաչափ և գործիքակազմ, մասնավորապես՝ • Խթանել համայնքներում ոչ առևտրային կոոպերատիվների, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ստեղծումը, որտեղ ներգրավված կլինեն համայնքի արոտօգտագործողները՝ արոտների կայուն կառավարման, իրենց շահերի ներկայացման և պաշտպանման նպատակով: • Խթանել համայնքներում արոտների օգտագործման տարեկան պլանը քննարկելու նպատակով հանրային քննարկումների կազմակերպումը, որը կարգավորվում է «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10 հոկտեմբեր 2018 թվականի 1146-Ն որոշմամբ: • Արոտների կայուն կառավարման ապահովման համար ՏԻՄ-երի աշխատակազմում պարտադիր դարձնել գյուղատնտեսի հաստիքը, ինչպես նաև հանդապահի

	ծառայության պահանջ, որի պարտադիր լինելը կարող է ամրագրվել ՏԻՄ-երի բյուջեում համապատասխան տող նախատեսելու պահանջով: Այս հաստիքը պարտադիր դարձնելու դեպքում դրանք պետք է ֆինանսավորվեն սուբսիդիաների, և հավաքագրված արոտավճարների միջոցով: • Հստակեցնել բնական կերհանդակների կառավարման և վերահսկողություն իրականացնելու համար պատասխանատու բոլոր մարմինների պատասխանատվության ոլորտները՝ ազգային և համայնքային մակարդակում: Մասնավորապես՝ ➢**ՏԻՄ-եր**, որոնք պատասխանատու են հանրային քննարկումներ կազմակերպելու համար, արոտների օգտագործման տարեկան պլանի կազմման և հաստատման համար, տարեկան պլանի կատարումը վերահսկելու համար, արոտների տնտեսական վիճակի մոնիտորինգի իրականացման համար, ինչպես նաև մոնիտորինգի արդյունքների հիման վրա համապատասխան որոշումներ կայացնելու համար, արոտային վարձավճարների սահմանման համար, վարձավճարների հավաքագրման համար, արոտային վճարներից ստացված եկամուտների տնօրինման համար, արոտների հետ կապված վեճերի լուծման համար: ➢Ազգային մակարդակում բնական կերհանդակների կառավարման հետ կապված իրավական և մասնագիտական վերահսկողությունը գործող օրենսդրության շրջանակներում պետք է իրականացնի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, իսկ շրջակա միջավայրի պահպանության հետ կապված վերահսկողությունը՝ Կառավարությանը ենթակա Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը: Միևնույն ժամանակ, ոլորտը գտնվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներքո, ըստ այդմ, վերջինս հանդիսանում է համապատասխան քաղաքականության սահմանողը: • Հստակեցնել արոտների կառավարման պլան կազմելու և արոտների օգտագործման մոնիտորինգի հետ կապված սկզբունքները: Մասնավորապես առաջարկվում է ՀՀ Հողային Օրենսգրքում ինկորպորացնել Ձեռնարկում և Ուղեցույցում սահմանված ընդհանուր սկզբունքները: Միևնույն ժամանակ, առաջարկվում է առանձին նորմատիվային հրամանով հաստատել վերոնշյալ փաստաթղթերը:

Պահանջվող օրենսդրական փոփոխություններ	Առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել հետևյալ փաստաթղթերում՝ • «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, որտեղ պետք է սահմանել՝ ➢ Բնական կերհանդակների կառավարման և վերահսկողություն իրականացնելու համար պատասխանատու բոլոր մարմինների պատասխանատվության ոլորտները՝ ազգային և համայնքային մակարդակում: • «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, որտեղ պետք է սահմանել ՏԻՄ-երի աշխատակազմում գյուղատնտեսի հաստիքը: • «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում, որտեղ պետք է համապատասխան տող ամրագրել ՏԻՄ-երի բյուջեյում հանդապահի ծառայության համար: • ՀՀ Հողային Օրենսգիրք, որտեղ պետք է հստակեցնել արոտների կառավարման պլան կազմելու և արոտների օգտագործման և վիճակի մոնիտորինգի հետ կապված սկզբունքները:
Համայնքների միջև համագործակցության համար համապատասխան գործիքակազմի և ձևաչափերի անբավարար մակարդակ	
Առաջարկվող փոփոխություններ	Խնդրի լուծման համար առաջարկվում է հետևյալ 2 մոտեցումները՝ • Ոչ ֆորմալ մոտեցում, որի դեպքում տվյալ համայնքի արոտների օգտագործման պլանները պետք է դիտարկվեն նաև մյուս համայնքապետերի կողմից: Այսպիսով, հետագայում որևէ համայնքում արոտների պակասի դեպքում համայնքապետարաններն իրենց բնակիչներին կարող են առաջարկել այլ համայնքների արոտավայրերի օգտագործման հնարավորություն: Այս մոտեցումն արոտօգտագործողներին հնարավորություն կտա գործ ունենալ և բանակցել իրենց համայքնապետարանների հետ: • Ֆորմալ մոտեցում, որի դեպքում համայնքները միմյանց վարձակալությամբ կարող են տրամադրել չօգտագործված արոտային տարածքները՝ պայմանագրի հիման վրա: Այս մոտեցումը, համաձայն գործող օրենսդրության պետք է իրականացվի հետևյալ գործընթացի համաձայն՝ ➢ Հողամասը վարձակալության իրավունքով հանձնելու համար անհրաժեշտ է այն չափագրել և ներկայացնել պետական գրանցման դրա նկատմամբ իրավունքները: ➢ ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածին համապատասխան վարձակալության տրամադրելու

	համար անհրաժեշտ է իրականացնել մրցույթ: Ընդ ուրում, այս դեպքում կարող է լինել այլ հաղթող: Այս մեխանիզմի ներդրումը կարող է պահանջել ֆինանսական էական ծախսեր: Գործընթացի պարզեցման համար առաջարկվում է որպես հողամասերը վարձակալության տրամադրելու մրցութային կարգից բացառություն սահմանել մեկ համայնքից մեկ այլ համայնքին արոտավայրերի վարձակալության իրավունքով տրամադրման պարզ ընթացակարգ:
Պահանջվող օրենսդրական փոփոխություն	Գործընթացի պարզեցման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել հետևյալ փաստաթղթում՝ • «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2011թ. N 286 որոշում, որտեղ պետք է սահմանել մեկ համայնքից մեկ այլ համայնքին արոտավայրերի վարձակալության իրավունքով տրամադրումը հողամասերը վարձակալության տրամադրելու մրցութային կարգից բացառություն:
Համայնքային, ազգային և մարզային մակարդակներում բնական կերհանդակների վերաբերյալ որոշումների կայացման համար հուսալի և լիարժեք տեղեկատվության անբավարար մակարդակ	
Առաջարկվող փոփոխություններ	Բնական կերհանդակների վերաբերյալ հուսալի և լիարժեք տեղեկատվության ապահովման համար առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ • Իրականացնել բնական կերհանդակների գույքագրում, • Ստեղծել բնական կերհանդակների վերաբերյալ քարտեզներ՝ առցանց և/կամ off-line տարբերակով, որտեղ արտացոլված կլինեն բնական կերհանդակների վերաբերյալ որոշումների կայացման համար պահանջվող տեղեկատվությունը, • Արոտավայրերի էկոլոգիական և տնտեսական վիճակի գնահատման նպատակով իրականացված մոնիտորինգի արդյունքների հիման վրա պարբերաբար թարմացնել վերոնշյալ քարտեզներում արտացոլված տեղեկատվությունը: Ներկա պահին ՀՀ-ում արդեն իսկ նախաձեռնվել է արոտավայրերի և խոտհարքների տեղեկատվական համակարգ, որը, ըստ նախնական ներկայացված իրագործելիության ուսումնասիրության, համակարգի ներդրման պարագայում հնարավորություն կընձեռի համապատասխան տվյալների ներբեռնման դեպքում վերլուծել բնական կերհանդակների վերաբերյալ հետևյալ

	տեղեկատվությունը՝ • ՀՀ արոտավայրերի և խոտհարքների ընդհանուր տարածքը, • Արոտավայրերի և խոտհարքների վիճակը, • Չօգտագործվող բնական կերհանդակները, • Բնական կերհանդակներն օգտագործողների վերաբերյալ տեղեկատվություն (ԱԱՀ, ֆիզիկական/իրավաբանական անձ, սեփականություն /վարձակալություն/տրված օգտագործման, ինչպես նաև կադաստրային ծածկագիր): • Բնական կերհանդակների տարածքները՝ ջրով/անջրդի, • Արոտներում խմոցների առկայություն/ջրարբիացված, • Բնական կերհանդակների դեգրադացման աստիճան, • Տվյալ համայնքի անասնագլխաքանակ, • Բնական կերհանդակների հեռավորությունը համայնքից/ծովի մակարդակից բարձրություն, թեքություն և այլն:
Պահանջվող օրենսդրական փոփոխություն	Առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել հետևյալ օրենսդրական փաստաթղթերում՝ • ՀՀ Հողային Օրենսգիրք, որտեղ, մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել՝ ➢ Տեղեկատվական քարտեզների ստեղծման անհրաժեշտությունը և պատասխանատու անձանց (այս պահին որպես պատասխանատու անձ դիտարկվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը), ➢ Վերոնշյալ տեղեկատվության և համապատասխան քարտեզների թարմացման անհրաժեշտությունը և պարբերականությունը:
Բնական կերհանդակների՝ արոտների կայուն կառավարման համար պահանջվող ենթակառուցվածքների պակաս	
Առաջարկվող փոփոխություններ	Առաջարկվում է սահմանել, որ արոտների օգտագործման դիմաց կատարված վճարների գերակշիռ մասը ՏԻՄ-երի կողմից ուղղվի արոտավայրերի ենթակառուցվածքների զարգացմանը և պահպանմանը, ինչպես նաև արոտների արդյունավետ կառավարմանն առնչվող գործառնական ծախսերին (օրինակ՝ հանդապահի հաստիքի ֆինանսավորում): Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ՏԻՄ-երի բյուջեում սահմանել առանձին ծախսային հոդված բնական կերհանդակների վերականգնման, բարելավման և կառավարման միջոցառումների համար:

Պահանջվող օրենսդրական փոփոխություն	Առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում:

Պահանջվող ռեսուրսների հետ կապված խնդիրներ	
Բյուջետային հատկացումների և ներդրումների սակավություն	
Առաջարկվող փոփոխություններ	Տես՝ «Բնական կերհանդակների կայուն կառավարման համար պահանջվող ենթակառուցվածքների պակաս» բաժնում առաջարկվող փոփոխությունները:
Մարդկային ռեսուրսների մասնագիտական կարողությունների անբավարար մակարդակ	
Առաջարկվող փոփոխություններ	Ոլորտում առաջարկվող փոփոխությունների իրականացումից հետո առաջարկվում է կազմակերպել կարողությունների զարգացման՝ ներառյալ ուսուցողական դասընթացներ բնական կերհանդակների կառավարման աշխատանքներում ընդգրկված բոլոր մարմինների համար:
Պահանջվող օրենսդրական փոփոխություն	Կիրառելի չէ

Հավելվածներ

Հավելված 1. Աշխատանքային խմբում ներկայացուցիչներ ապահոված կառույցների ցանկ

1. Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն
2. Ռազմավարական զարգացման գործակալություն հասարակական կազմակերպություն
3. ՀՀ բնական կերհանդակների՝ կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն
4. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
5. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն/ՀԳՌԿՄ-2 ծրագիր
6. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
7. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
8. ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ
9. ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով
10. Միավորված ազգերի զարգացման գործակալություն
11. Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ
12. Դեպի կայուն էկոհամակարգեր հասարակական կազմակերպություն
13. ՀՀ ազգային ագրարային համալսարան
14. Սարուխան գյուղի «Արոտ օգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվ
15. Շիրակի մարզպետարան
16. Սյունիքի մարզպետարան
17. Գեղարքունիքի մարզպետարան
18. Տեղի համայնքապետարան
19. Արենիի համայնքապետարան
20. Սիսիանի համայնքապետարան
21. Գորիսի համայնքապետարան

Հավելված 2. Աշխատանքների ընթացքում անհատական հանդիպումներ իրականացրած շահառուների ցանկը

Կառույցի անվանում	Պատասխանատու անձ/անձիք
ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով	Աշոտ Հարությունյան, Փորձագետ
ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն	Աշոտ Վարդևանյան, Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ Ոսկեհատ Գրիգորյան, Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչության Կենսաբազմազանության և կենսաանվտանգության քաղաքականության բաժնի պետ Գայանե Նիկողոսյան, Բուսական ռեսուրսների կառավարման բաժնի պետի տեղակալ
ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Շանթ Հարությունյան, Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության Համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի առաջատար մասնագետ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Տիգրան Գաբրիելյան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	Տաթև Եղիազարյան, Ուսուցման և մասնագիտական օժանդակության մասնագետ
ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն	Վարդան Համբարձումյան, Համակարգման հարթակի աշխատանքների համակարգող
Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ	Գագիկ Թովմասյան, Բնական ռեսուրսների կառավարման մասնագետ ՀԱԱՀ Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի վարիչ

Հավելված 3.Հանդիպումների ընթացքում ներկայացված ոլորտում առկա խնդիրները և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկները

1. Հայեցակարգի նպատակ

ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման արդյունավետ և միասնական մեխանիզմի ներդրում և գործարկում, որի կիրարկումը կհանգեցնի՝

- Անասնապահության ոլորտի կայուն զարգացմանը, ներառյալ անասնապահության ոլորտի արտադրողականության բարձրացմանը,
- Բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն օգտագործմանը, պահպանմանը, վերականգնմանը, կենսաբազմազանության խոցելիության կրճատմանը, ինչպես նաև բնական էկոհամակարգերի կայուն զարգացման ապահովմանը ապագայում:

2. ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտի առկա խնդիրները

2.1 Օրենսդրական դաշտը և առկա խնդիրները

<u>Ոլորտը կարգավորող միակ փաստաթղթերը</u>՝

- ***«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին»*** ՀՀ Կառավարության որոշումը:
- ***«ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին»*** ՀՀ Կառավարության որոշումը:

<u>Վերհանված խնդիրները</u>՝

- Փաստաթղթերը կարգավորում են բացառապես պետական սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործման և կառավարման գործընթացները, իսկ համայնքային ղեկավարներին փաստաթուղթը միայն առաջարկում է համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակների օգտագործումն իրականացնել որոշման պահանջների համաձայն:
- Փաստաթղթերի կարգավորման դաշտից դուրս են մնում ոլորտի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ՝ դերերի և գործառույթների բաշխումը, արդյունավետ գնագոյացման սկզբունքների նկարագիրը (բնական կերհանդակներից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ բնական կերհանդակի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար, որը սովորաբար չի արտացոլում դրանց տնտեսական արժեքը և, հետևաբար, այդքան էլ արդյունավետ մեխանիզմ չի համարվում), տեխնիկական պահանջները:
- Որպես ոլորտը կարգավորող միակ փաստաթղթեր, դրանք շատ ընդհանրական են գրված, սահմանելով միայն ընդհանուր սկզբունքներ:
- Փաստաթղթերն ընդունվել են համապատասխանաբար 2010 և 2011 թվականներին և դրանից հետո երբևէ չեն վերանայվել:

<u>Այլ փաստաթղթեր</u>՝

- **ՀՀ Հողային Օրենսգիրքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** որոշակիորեն անդրադառնում են ընդհանուր հողօգտագործման վերաբերյալ հարցերին, սակայն փաստաթղթերը շատ ընդհանրական են և կոնկրետ անդրադարձ չեն

կատարում արոտավայրերի և խոտհարքների կառավարմանն առնչվող հարցերին:

2.2 Ինստիտուցիոնալ համակարգեր և առկա խնդիրներ

- Տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կայացվածություն:
- Համայնքների միջև համագործակցելու պատրաստակամություն:
- Տեղեկատվական հոսքեր:
- Պետական կառավարման խնդիրներ:
- Ենթակառուցվածքների բացակայություն:
- Կառուցվածքային և կազմակերպչական խնդիրներ:

2.3 Պահանջվող ռեսուրսներ և առկա խնդիրներ

- Բյուջետային հատկացումների և ներդրումների սակավություն:
- Մարդկային ռեսուրսների սակավություն:
- Գիտելիքների և հմտությունների ցածր մակարդակ:
- Աշխարհագրական դիրք/բնական պայմաններ:

3. ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ռազմավարության վերաբերյալ նախնական առաջարկություններ

Ոլորտում պահանջվող հիմնական փոփոխությունների վերաբերյալ նախնական առաջարկություններ՝

- Բնական կերհանդակների օգտագործման վարձավճարի սահմանում ըստ անասնագլխաքանակի՝ ներկայիս գործող քառակուսի մետրի փոխարեն: Միևնույն ժամանակ, կախված արոտավայրի գտնվելու վայրից և վիճակից՝ տարբեր վարձավճարների սահմանում:
- Միասնական մոտեցման կիրառում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի համար:
- ՏԻՄ-երի լիազորությունների և պատասխանատվության շրջանակների հստակեցում:
- Համայնքներում որոշ հաստիքների առկայության պահանջի սահմանում, որոնք պատասխանատու կլինեն բնական կերհանդակների կառավարման համար:
- Համայնքներում կոոպերատիվների կամ այլ ֆորմալ խմբերի ստեղծում, որում ներառված կլինեն համայնքի բոլոր արոտօգտագործողները: Այս խմբերի լիազորությունների և պարտականությունների հստակ սահմանում:
- Ենթակառուցվածքների բարելավման նպատակով նվազագույն բյուջետային հատկացումներ իրականացնելու պահանջի սահմանում:
- Հանրապետությունում բնական կերհանդակների գույքագրման աշխատանքների իրականացում և համապատասխան տեղեկատվական համակարգի ստեղծում:
- Առանձին խմբերի համար բնական կերհանդակների արդյունավետ կառավարման վերաբերյալ իրազեկման բարձրացում:

Հավելված 4.Աշխատանքային խմբի անդամների հետ ունեցած հանդիպումների արձանագրությունները

ՀՀ ԲՆԱԿԱՆ ԿԵՐՀԱՆԴԱԿՆԵՐԻ՝ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ 1-ԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ի հուլիսի 30-ին «Էլիտ Պլազա » բիզնես կենտրոնի VIP սրահում (հասցե՝ Մովսես Խորենացու փող. 15, Երևան 0010, ՀՀ) տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակագրի մշակման աշխատանքային խմբի 1-ին հանդիպումը:

Հանդիպման օրակարգը՝

14:00 – 14:10	**Մասնակիցների ժամանում** Գրանցում և սուրճի ընդմիջում
14:10 – 14:25	**ՀՀ-ում բնական կերհանդակների հայեցակարգի մշակման նախագծի ներկայացում** *«Ըդվայզ բիզնես եվ իրավաբանական խորհրդատվություն» ՍՊԸ*
14:25 - 16:25	**Հայեցակարգի նախնական կառուցվածքի քննարկում** *«Ըդվայզ բիզնես եվ իրավաբանական խորհրդատվություն» ՍՊԸ*
16:25 – 17:10	**Քննարկումներ աշխատանքային խմբի անդամների հետ** *«Ըդվայզ բիզնես եվ իրավաբանական խորհրդատվություն» ՍՊԸ*
17:10 – 17:30	**Հանդիպման ամփոփում, հետագա քայլերի համաձայնեցում** *Համակարգման հարթակի քարտուղարություն*

Հանդիպման մասնակիցները՝

1. Ռուդիկ Նազարյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
2. Գայանե Նիկողոսյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
3. Աշոտ Վարդևանյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
4. Շանթ Առաքելյան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
5. Տաթև Եղիազարյան – Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
6. Մովսես Մանուկյան –Շիրակի մարզպետարան
7. Գագիկ Խաչատրյան – Սյունիքի մարզպետարան
8. Ներսես Շադունց – Տեղի համայնքապետարան
9. Վարդան Շահինյան – Արենիի համայնքապետարան
10. Կարեն Աղաբաբյան – Դեպի կայուն էկոհամակարգեր ՀԿ
11. Մեսրոպ Քոլոզյան – Սարուխան գյուղի «Արոտ օգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ
12. Դավիթ Նավասարդյան – Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ

13. Կարեն Թորոսյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (ՀԳՌԿՄ -2 ծրագիր)
14. Գագիկ Թովմասյան – Ռազմավարական զարգացման գործակալություն, ՀԱԱՀ
15. Վարդան Համբարձումյան – ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն
16. Վիկտորյա Այվազյան – Ռազմավարական զարգացման գործակալություն
17. Արևիկ Սարգսյան – «Ըդվայզ» խորհրդատվական
18. Լիլիթ Ղարայան – «Ըդվայզ» խորհրդատվական
19. Երանուհի Հակոբյան – «Ըդվայզ» խորհրդատվական

1-ին հանդիպման նպատակն էր՝ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) շրջանակներում ձևավորված «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակագրի (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակման» աշխատանքային խմբի անդամներին ազդարարել հայեցակագրի մշակման աշխատանքների մեկնարկը և վերջիններիս հետ քննարկել և հաստատել հայեցակարգի՝ «Ըդվայզ» ընկերության կողմից առաջարկվող կառուցվածքը:

Հանդիպման սկզբում ողջույնի խոսքով ելույթ ունեցավ Հարթակի քարտուղարության համակարգող Վարդան Համբարձումյանը և ներկայացրեց հանդիպման նպատակը և ակնկալվող արդյունքները:

Այնուետև «Ըդվայզ» ընկերության գործընկեր Երանուհի Հակոբյանը ներկայացրեց նախատեսված հայեցակարգի՝ իրենց կողմից առաջարկվող կառուցվածքը (Տես՝ Հավելված 1): Ներկայացման ընթացքում հանդիպման մասնակիցները «Ըդվայզ» ընկերության ներկայացուցիչներին ուղղեցին իենց հարցերը, բարձրաձայնեցին հայեցակարգի բովանդակության առումով իրենց ունեցած մտահոգությունները և կիսվեցին հայեցակարգի ուղղվածության իրենց տեսլականով: Մասնավորապես՝

- «Ըդվայզ» ընկերության տնօրեն Լիլիթ Ղարայանը հետաքրքրվեց Էկոնամիկայի նախարարության ներկայացուցիչից, թե ինչ փուլում են գտնվում Գյուղատնտեսության Զարգացման Ռազմավարության մշակման աշխատանքները: Պարզվեց, որ Ռազմավարության մշակման գործընթացը դեռ կազմավորման փուլում է, բայց և շեշտադրվեց, որ հայեցակարգը իր բնույթով պետք է չշեղվի ընդհանուր գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունից և դրա մի մասը կազմի:
- Հարթակի աշխատանքներին պակաս տեղյակ գործընկերների համար Կարեն Թորոսյանը ներկայացրեց ՀԳՌԿՄ և ՀԳՌԿՄ-2 ծրագրեը, իսկ Գագիկ Թովմասյանը՝

Հարթակի կազմավորման և կենսառեսուրսների, մասնավորապես արոտավայրերի և խոտհարքերի կառավարման ոլորտի համար պետական քաղաքականության անհրաժեշտությունը:

- Հաստատվեց, որ հայեցակարգի նախաբանում պատմական ակնարկի տեսքով կներկայացվեն ՀՀ-ում իրականացված ոլորտին առնչվող ծրագրերը և նրանց կողմից հանդիպած դժվարությունները, որպես հայեցակարգի մշակման անհրաժեշտության հիմնավորում:
- Աշոտ Վարդևանյանը առաջարկեց դեգրադացված արոտավայրերի վերականգնման կամ դրանց խնդրի լուծման հարցերում ի նկատի ունենալ ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունները՝ վերածելու հանրապետության տարածքի 20,1%-ը անտառապատ տարածք, քանի որ դեգրադացված արոտավայրի անտառապատումը հողաշերտի վերականգնման միջոց է հանդիսանում: Մասնակիցները արձագանքեցին, որ անտառտնկման աշխատանքների ներառումը հայեցակարգի մեջ նպատակահարմար չէ և դուրս է արոտավայրերի կայուն կառավարման տիրույթից: Այնուամենայնիվ, շեշտադրվեց, որ գյուղատնտեսության (անասնաբուծության)

զարգացումը և դրա հետևանքով առաջացող հավանական բնապահպանական խնդիրները պետք է իրար զուգահեռ քննարկվեն հայեցակարգում և բնապահպանության ու գյուղատնտեսության ոլորտները չպետք է մեկը մյուսից գերադասվեն:

- Աշոտ Վարդևանյանը նկատեց, որ արոտի կառավարումը հողերի կառավարման մի մասն է և չպետք է տարանջատել դրանք: Ի պատասխան, Ռուդիկ Նազարյանը շեշտեց, որ նախատեսվող հայեցակարգի առավելությունը կայանալու է իր թիրախային (սպեցիֆիկ) լինելը, առկա խնդիրների մանրամասն դիտարկումը: Պրն. Վարդևանյանը ամփոփեց, որ հայեցակարգում անհրաժեշտ է հաշվի առնել, ոչ միայն այս ոլորտի այլև հարակից ոլորտները կարգավորող օրենքները, ռազմավարությունները, քաղաքականությունը:
- Մասնակիցների կողմից հաստատվեց, որ հայեցակարգի շրջանակներում նախատեսված SWOT վերլուծությունը անհրաժեշտ է իրականացնել ազգային շահի տեսանկյունից՝ կայուն կառավարումը և կայուն զարգացումը դիտարկելով որպես թիրախ:

- Մեսրոպ Քոլոզյանը ներկայացրեց կոոպերատիվների միջոցով արոտավայրի կառավարման իրենց համայնքի փորձը, որտեղ հարկային անբարենպաստ պայմանների, կոոպերատիվի անդամների կողմից կոոպերատիվի գաղափարի և դերի թերի ընկալման պատճառով մոդելը չի աշխատել: Բարձրաձայնվեցին նաև համայնքներում գործող արոտ օգտագործողների կոոպերատիվների և համայնքապետարանի միջև արոտների կառավարման հարցում դերերի բաժանման թերըմբռնման խնդիրները:

- Վարդան Համբարձումյանը խմբի անդամներին տեղեկացրեց, որ Հարթակի շրջանակներում նախատեսվում է ուսուցողական այց Ղրղզստան՝ տեղի արոտների կառավարման մոդելի ուսումնասիրման նպատակով: Աշխատանքային խմբի և «Ըդվայզ» ընկերությանսահմանափակ թվով ներկայացուցիչներ հնարավորություն կունենան մասնակցել ուսուցողական այցին:
- Կարեն Աղաբաբյանը շեշտեց, որ հայեցակարգի առաջարկությունների բաժնում անհրաժեշտ կլինի նաև ներառել արոտավայրերում կենսաբազմազանության պարբերաբար մոնիթորինգ իրականացնելու անհրաժեշտությունը:
- Ներսես Շադունցը կիսվեց ՀՀ-ում և ԼՂՀ-ում արոտների կառավարման, արոտօգտագործողների կողմից դրանց օգտագործման տարբերությունների իր դիտարկումներով: Պարզվում է, որ նույն արոտօգտագործողը Հադրութի շրջանում հեշտությամբ վճարում է արոտօգտագործման համար, իսկ օրինակ Տեղ բնակավայրի արոտների համար վճարել հրաժարվում է, քանի որ վերահսկման մեխանիզմները թույլ են և արդյունքում վարչարարություն չի իրականացվում:
- «Ըդվայզ» ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ աշխատանքը նախատեսում են ավարտել նոյեմբեր ամսվա վերջին, իսկ հայեցակարգի նախնական տարբերակը պատրաստ կլինի սեպտեմբերին:

Վերջում ամփոփվեցին հայեցակարգի մշակման հետագա քայլերը: «Ըդվայզ» ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ օգոստոսին պլանավորում են աշխատել նյութերի հավաքագրման և որոշ բաժինների մշակման վրա, իսկ սեպտեմբերին նախատեսում են հանդիպումների ակտիվ շրջան, երբ անհատապես կամ ոլորտային խմբերով կսկսեն աշխատել աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ:

Հավելված 1
Բնական կերհանդակների կառավարման հայեցակարգ
Բովանդակություն

1. Նախաբան

1.1 Հայեցակարգի նպատակների սահմանում

ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման արդյունավետ և միասնական մեխանիզմի ներդրում և գործարկում, որի կիրարկումը կհանգեցնի՝

- Անասնապահության ոլորտի կայուն զարգացմանը, ներառյալ անասնապահության ոլորտի արտադրողականության բարձրացմանը,
- Բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն օգտագործմանը, պահպանմանը, վերականգնմանը, կենսաբազմազանության խոցելիության ռիսկերի կրճատմանը, ինչպես նաև բնական էկոհամակարգերի կայուն զարգացման ապահովմանը ապագայում:

1.2 Մոտեցումներ և մեթոդաբանություն

- ՌԶԳ ՀԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվության վերլուծություն,
- ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարմանն առնչվող այլ նյութերի ուսումնասիրություն,
- Միջազգային փորձի վերլուծություն,
- ՀՀ օրենսդրության վերլուծություն,
- Քննարկումներ համապատասխան ոլորտային մասնագետների հետ,
- Քննարկումներ աշխատանքային խմբի հետ:

2. ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարմանոլորտի ընդհանուր նկարագիրը և առկա խնդիրները

2.4 Օրենսդրական դաշտը և առկա խնդիրները

- Ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրություն և ոլորտի զարգացման համար հնարավոր խոչընդոտ հանդիսացող օրենսդրական խնդիրների ներկայացում:

2.5 Ինստիտուցիոնալ համակարգեր և առկա խնդիրները

- Ենթակառուցվածքներ, սեփականության սուբյեկտի ձև, միմյանց հետ համագործակցելու պատրաստակամություն, ինֆորմացիոն հոսքեր և այլն:

2.6 Պահանջվող ռեսուրսների առկայություն և առկա խնդիրները

- Աշխարհագրական դիրք, բնակլիմայական պայմաններ, մարդկային ռեսուրսներ, գիտելիքներ և հմտություններ, տեխնիկական հագեցվածություն, ֆինանսական միջոցների հասանելիություն և այլն:

2.7 SWOT վերլուծություն

- Ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն:

3. Կերհանդակների կառավարման միջազգային փորձը

- Տեղեկատվության հասանելիության դեպքում նախատեսվում է իրականացնել միջազգային փորձի վերլուծություն համաձայն 2-րդ կետում ներկայացված կառուցվածքի,
- Նախատեսվում է ուսումնասիրել և զարգացող և զարգացած երկրների փորձը,
- Ներկայացվող երկրները պետք է իրենց ռելիեֆով, կենսա-կլիմայակն պայմաններով և սեփականության սուբյեկտի ձևով նման լինեն ՀՀ-ին,
- Վերոնշյալ ուսումնասիրության արդյունքում ՀՀ-ում բնական կերհանդակների արդյունավետ կառավարման հայեցակարգի մշակման համար հիմք կընդունվի (benchmark) այն երկիր փորձը, որն առավելապես հնարավոր կլինի ադապտացնել Հայաստանում:

4. ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարմանռազմավարության վերաբերյալ առաջարկություններ

4.1 ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման նպատակների գերակայությունների սահմանում

- Հիմք ընդունելով վերհանված խնդիրները, պետք է սահմանվեն առաջնահերթ նպատակները: Նախատեսվում է սահմանել առաջնային/կարճաժամկետ և երկրորդային/երկարաժամկետ նպատակներ:

4.2 ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ռազմավարական նպատակների և արդյունքային ցուցանիշների սահմանում

- Որակական և քանակական ցուցանիշների սահմանում, որոնք հնարավորություն կտան չափելի դարձնել ակնկալվող արդյունքները: Նախատեսվում է ներկայացնել առաջարկի տեսքով, որոնք հետագայում հնարավոր կլինի ներառել համապատասխան ռազմավարության մեջ:

4.3 Առաջարկվող հայեցակարգի սոցիալական, տնտեսական, շրջակա միջավայրի վրա հնարավոր ներգործության գնահատում

ՀՀ ԲՆԱԿԱՆ ԿԵՐՀԱՆԴԱԿՆԵՐԻ՝ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ 2-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ի հոկտեմբերի 29-ին ԳՄՀԸ գրասենյակում (հասցե՝ Մ. Բաղրամյան պողոտա 4/1, Երևան, ՀՀ) տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակագրի մշակման աշխատանքային խմբի 2-րդ հանդիպումը:

Հանդիպման օրակարգը՝

Ժամ	*Թեմա*
14:20 - 14:30	**Ժամանում, գրանցում, սուրճ**
14:30 - 14:35	Ողջույնի խոսք, հանդիպման նպատակի ներկայացում *Վ. Համբարձումյան՝ Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ*
14:35 - 16:15	ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտում առկա խնդիրները և խնդիրների լուծման համար առաջարկվող լուծումները *Ներկայացնող՝ Ե. Հակոբյան, Adwise LLC*
16:15 - 16:45	Առաջարկություններ, դիտողություններ, հարց ու պատասխան
16:45 - 17:00	**Հանդիպման ամփոփում, հետագա քայլերի ուղենշում**

Հանդիպման մասնակիցները՝

1. Գայանե Նիկողոսյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
2. Աշոտ Վարդևանյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
3. Ոսկեհատ Գրիգորյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
4. Հռիփսիմե Բաբայան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
5. Վարսիկ Մարտիրոսյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
6. Սիլվա Հակոբյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
7. Հովիկ Սայադյան – ՄԱԶԾ
8. Դավիթ Նավասարդյան – Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ
9. Հրաչյա Զաքոյան – Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան
10. Աստղիկ Դանիելյան – ԳՄՀԸ
11. Կարինա Հարությունյան – Ռազմավարական զարգացման գործակալություն
12. Գագիկ Թովմասյան – Ռազմավարական զարգացման գործակալություն, ՀԱԱՀ
13. Վիկտորյա Այվազյան – Ռազմավարական զարգացման գործակալություն
14. Վարդան Համբարձումյան – ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն
15. Արևիկ Սարգսյան – «Ըդվայզ» խորհրդատվական
16. Լիլիթ Ղարայան – «Ըդվայզ» խորհրդատվական
17. Երանուհի Հակոբյան – «Ըդվայզ» խորհրդատվական
18. Հայկ Մալխասյան – «Ըդվայզ» խորհրդատվական

2-րդ հանդիպման նպատակն էր՝ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) շրջանակներում ձևավորված «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակագրի (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակման» աշխատանքային խմբի անդամներին ներկայացնել վերջին ամիսների ընթացքում «Ըդվայզ» խորհրդատվականի կողմից իրականացված աշխատանքը:

Հանդիպման հիմնական շեշտադրումը Հայեցակարգի մաս կազմող՝ *ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման բացահայտված խնդիրների հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկների* ներկայացումն ու քննարկումն էր:
Հանդիպման սկզբում ողջույնի խոսքով հանդես եկավ Աստղիկ Դանիելյանը (ԳՄՀԸ), ով կարևորեց ներկաների մասնակցությունը աշխատանքային խմբի աշխատանքներին: Ապա Կարինա Հարությունյանը (ՌԶԳ) խրախուսեց ներկաներին քննարկման ընթացքում լինել ակտիվ և նախաձեռնող, քանզի մշակվող փաստաթուղթը հանդիսանալու է միասնական աշխատանքի արդյունք:
Այնուհետև «Ըդվայզ» ընկերության ներկայացուցիչ Լիլիթ Ղարայանը հակիրճ ներկայացրեր իրականացված աշխատանքների ընթացը և ևս առաջարկեց մասնակիցներին լինել ակտիվ: Այուհետև «Ըդվայզ» ընկերության ներկայացուցիչ Երանուհի Հակոբյանը ներկայացրեց բացահայտված խնդիրները և դրանց համար առաջարկվող համապատասխան լուծումները, որոնք դասակարգված էին ըստ օրենսդրական դաշտում առաջարկվող լուծումների, ինստիտուցիոնալ դաշտում առաջարկվող լուծումների և պահանջվող ռեսուրսների վերաբերյալ առաջարկվող լուծումների: Բացի վերոնշյալը, աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացվեցին նաև տարբեր շահագրգիռ կողմերի կողմից առաջադրված դիտարկումները:
Ներկայացման ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին իրենց առաջարկությունները, հարցերը և ներկայացվող առաջարկների, ձևակերպումների վերաբերյալ իրենց ունեցած մտահոգությունները: Մասնավորապես՝

- Հայեցակարգով առաջարկվում է փոփոխել օրենսդրական դաշտը՝ միասնական մոտեցում ապահովելով համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի համար: Քննարկվեց, որ կա իրավական խնդիր (սահմանադրական արգելք), մասնավոր սեփականության արոտավայրերի հանդեպ ապահովել նույն մոտեցումը, ինչ պետական և համայնքային արոտավայրերի, քանի որ, չնայած ֆորմալ առումով հնարավոր է կարգավորել մասնավոր արոտավայրերի օգտագործումը/կառավարումը, այնուամենայնիվ, մասնավոր սեփականության հանդեպ սահմանափակումները չպետք է սահմանափակեն սեփականատիրոջը արդյունավետ օգտագործել իր սեփականության իրավունքը: Մասնավոր տնտեսվարողին չի կարելի պարտադրել արածեցում կազմակերպել արոտավայրում: Մասնակիցները նշեցին, որ մասնավոր արոտավայրի չօգտագործումը համընկնում է դրա ոչ նպատակային օգտագործման հետ: Առաջարկվեց այս հարցը թողնել հետագա քննարկմանը և Ըդվայզի կողմից լրացուցիչ ուսումնասիրմանը (այլ երկրների փորձ): Նշվեց նաև որ եթե պարզվի որ այնուամենայնիվ հնարավոր չէ ապահովել մասնավոր սեփականության արոտավայրի օգտագործման օրենսդրական կարգավորում, ապա միգուցե արգելել արոտավայրերի հետագա մասնավորեցումը, քանի որ կա հավանականություն, որ մասնավոր արոտավայրերը կշատանան:
- Քննարկվեց մշակվող Հայեցակարգի՝ Գյուղատնտեսության ռազմավարության մեջ ներառելու կարևորության հարցը: Նշվեց, որ հարցը քննարկվել է Էկոնոմիկայի նախարարության հետ, բայց թե ինչ ձևաչափով է հայեցակարգը ներառվելու Ռազմավարության մեջ մինչև վերև պարզ չէ, քանի որ հարցը Էկոնոմիկայի նախարարության որոշման դաշտում է գտնվում:
- Առաջարկվեց վարձավճարների գանձման մեխանիզմների առումով հաշվի առնել արոտավայրի մթերատվությունը (էկոլոգիա-տնտեսական վիճակ) և հասանելիությունը (հեռավորություն, ենթակառուցվածքների առկայություն և այլն): Որպես վարձավճարի սահմանման հիմք պետք է ընդունվի արոտավայրի կադաստրային արժեքը (որը ներառում է բազմաթիվ գործոններ), բայց գանձումը կատարվի 1 պայմանական խոշորի

համար միջինացված գնով: Միևնույն ժամանակ, կարևոր է տարանջատել միայն հեռագնա արոտավայրից և թե հեռագնա, թե համայնքամերձ արոտավայրից օգտվող կենդանիների համար սահմանված վարձավճարները:

- Առաջարկվեց վարձավճարների սահմանման համար համայնքներին տալ ճկունություն վարձավճարը սահմանել նվազագույն շեմից (հողի հարկից) ավել:
- Քննարկվեց նաև թե արդյոք վարձավճարները պետք է սահմանվել 1 տարվա, 1 արոտային սեզոնի, թե 1 ամսվա համար: Ընդգծվեց, որ ճիշտ է վարձավճարը սահմանել արոտային սեզոնի համար և տրամաբանական է, որ եթե անհատի անասունը ոչ ամբողջ արոտային սեզոնի ընթացքում է օգտվել արոտից, ապա պետք է վճարի միայն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում օգտվել է արոտից: Օրինակ եթե արոտային սեզոնը 6 ամիս է, անասունը օգտվել է 3 ամիս, ապա պետք է գանձվի սահմանված գնի կեսը: Այնուամենայնիվ, շեշտադրվեց, որ անկախ նրանից օգտագործվում է հողը թե, ոչ դրա համար գոյանում է հարկ, ինչը նշանակում է, որ արոտավայրի պարագայում օգտագործվում է այն 1 օր, թե ամբողջ արոտաշրջան, նրա համար սահմանված վճարը պետք է գանձել: Բացի այդ, ըստ փաստացի օգտագործած ամիսների, վճար գանձելը իր մեջ կրում է կոռուպցիոն ռիսկեր: Առաջարկվեց, հարցը քննարկել համայնքների հետ:
- որ համաձայն ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշմամբ հաստված կարգի դրույթների հնարավոր է իրականացնել հաղատեսքերի փոփոխություններ, հավելված 2-ով հաստված գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի գործունեության կարգի դրույթների համաձայն՝ Հանձնաժողովի դրական եզրակացության (ոչ թե կառավարության, այլ կառավարության հատատած կարգի համաձայն):
- Եվս մեկ անգամ շեշտադրվեց կադաստրային արժեքների վերանայման և դրանց իրական արժեքին համապատասխանեցման խնդիրը: Հ. Բաբայանը նշեց, որ համաձայն ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների՝ հնարավոր է իրականացնել հաղատեսքերի փոփոխություններ:
- Շեշտադրվեց, որ կառավարման իրականացման, պլանավորման համար, կարիք չկա ստեղծել լրացուցիչ մարմիններ և ՏԻՄ-ը ի վիճակի է իր անձնակազմով իրականացնի այս գործառույթը: Գործընթացը մասնկացային դարձնելու համար կարելի է կազմակերպել համայնքային ժողով, քննարկում և այլն:
- Կարևորվեց ՏԻՄ անձնակազմում օրենքով մասնագիտական հաստիքների՝ գյուղատնտեսի, անասնաբույժի պահանջ սահմանելու պահանջը: Եթե կառավարման պլանի մշակումը և կիրառումը համայնքում լինի պարտադիր լիազորություն, ապա սրա ապահովման համար պետական բյուջեյից կլինեն սրանց ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:
- Կառավարման պլանի մշակման համար կարևոր է մեթոդական ուղղեցույցների առկայությունը, որը կօգնի ՏԻՄ-երին մշակել արոտների կառավարման պլաններ:
- Համայնքների միջև արոտավայրերի վերաբերյալ համագործակցության համար անհրաժեշտ է հիմք ընդունել արդեն իսկ համայնքի համար մշակված արոտավայրի կառավարման պլանը: Արդյունավետ համագործակցության համար առաջարվեց 3

տարբերակ՝ միջհամայնքային պայմանագիր (կազմել ընդհանրական պլան), վարձակալություն և ոչ-ֆորմալ համագործակցություն (ավելցուկ արոտավայրի մասին հայտարարություն տալ): Սակայն վերոնշյալ տարբերակները չեն հանդիսանում համագործակցության ամբողջական շրջանակը և կարող են գործել համագործակցության այլ տարբերակներ ևս:

- Քննարկվեց նաև արոտավայրերի օգտագործման դիմաց գանձված վճարներից գումար ուղղվի արոտային ենթակառուցվածքների ստեղծմանն ու պահպանմանը, արոտավայրի խնամքին և բարելավմանը: Քննարկվեց, թե հավաքագրված վճարների նվազագույն որ մասն է ավելի նպատակահարմար ուղղել արոտային ենթակառուցվածքների ստեղծմանն ու պահպանմանը: Որոշվեց հարցը քննարկել համայնքների հետ:

Վերջում ամփոփվեցին հայեցակարգի վերջնականացման հետագա քայլերը: Քննարկվեց, որ առաջարկությունների գլուխը կվերանայվի՝ հաշվի առնելով ստացված մեկնաբանությունները և կշրջանառվի աշխատանքային խմբի անդամների շրջանում:
Հայեցակարգի ամբողջական տարբերակը քննարկման կներկայացվի Հարթակի 6-րդ աշխատաժողովի ընթացքում, որը նախատեսված է նոյեմբեր ամսվա երրորդ տասնօրյակի ընթացքում:

ՀՀ ԲՆԱԿԱՆ ԿԵՐՀԱՆԴԱԿՆԵՐԻ՝ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ 3-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ի նոյեմբերի 8-ին ԳՄՀԸ գրասենյակում (հասցե՝ Մ. Բաղրամյան պողոտա 4/1, Երևան, ՀՀ) տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակագրի մշակման աշխատանքային խմբի 3-րդ հանդիպումը:

Հանդիպման օրակարգը՝

Ժամ	*Թեմա*
14:00 - 14:05	**Ժամանում, գրանցում, սուրճ**
14:05 - 14:10	Ողջույնի խոսք, հանդիպման նպատակի ներկայացում
14:10 - 14:15	Հայեցակարգի նպատակները *Ներկայացնող՝ Ե. Հակոբյան, Adwise LLC*
14:15 - 14:20	Հայեցակարգի մշակման համար կատարված աշխատանքները և կիրառված մեթոդաբանությունը *Ներկայացնող՝ Ե. Հակոբյան, Adwise LLC*
14:20 - 14:50	**Ճաշի ընդմիջում**
14:50 - 15:00	Բնական կերհանդակների կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությանամփոփ արդյունքները *Ներկայացնող՝ Ե. Հակոբյան, Adwise LLC*
15:00 - 16:15	ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման ոլորտում առկա խնդիրները և խնդիրների լուծման համար առաջարկվող լուծումները *Ներկայացնող՝ Ե. Հակոբյան, Adwise LLC*
16:15 - 17:15	Առաջարկություններ, դիտողություններ, հարց ու պատասխան
17:15 - 17:30	**Հանդիպման ամփոփում, հետագա քայլերի ուղենշում**

Հանդիպման մասնակիցները՝

1. Մարտին Պետրոսյան – Գեղարքունիքի մարզպետարան
2. Անդրանիկ Նալբանդյան – Շիրակի մարզպետարան
3. Գագիկ Խաչատրյան – Սյունիքի մարզպետարան
4. Հուսիկ Սահակյան – Արենիի համայնքապետարան
5. Վարդան Շահինյան – Արենիի համայնքապետարան
6. Ներսես Շադունց – Տեղի համայնքապետարան
7. Արմեն Խաչատրյան – Սիսիանի համայնքապետարան
8. Անդրանիկ Հարությունյան – Սիսիանի համայնքապետարան
9. Արմեն Բեգլարյան – Սիսիանի համայնքապետարան
10. Վահան Ղազարյան – Սիսիանի համայնքապետարան
11. Սպարտակ Մինասյան – Գորիսի համայնքապետարան
12. Արարատ Օրդյան – Գորիսի համայնքապետարան
13. Աստղիկ Դանիելյան – ԳՄՀԸ
14. Կարեն Թորոսյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ -2 ծրագիր
15. Վիկտորյա Այվազյան – Ռազմավարական զարգացման գործակալություն
16. Վարդան Համբարձումյան – ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն
17. Արևիկ Սարգսյան – «Ըդվայզ» խորհրդատվական
18. Լիլիթ Ղարայան – «Ըդվայզ» խորհրդատվական
19. Երանուհի Հակոբյան – «Ըդվայզ» խորհրդատվական
20. Հայկ Մալխասյան – «Ըդվայզ» խորհրդատվական

3-րդ հանդիպման նպատակն էր՝ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) շրջանակներում ձևավորված «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակագրի (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակման» աշխատանքային խմբի մարզային ներկայացուցիչներին ներկայացնել վերջին ամիսների ընթացքում «Ըդվայզ» խորհրդատվականի կողմից իրականացված աշխատանքը և քննարկել խնդրահարույց կետերը:

Հանդիպման հիմնական շեշտադրումը Հայեցակարգի մաս կազմող՝ *ՀՀ-ում բնական կերհանդակների կառավարման բացահայտված խնդիրների հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկների* ներկայացումն ու քննարկումն էր:

Հանդիպման սկզբում ողջույնի խոսքով հանդես եկավ Վարդան Համբարձումյանը (ՌԶԳ) և Աստղիկ Դանիելյանը (ԳՄՀԸ), ովքեր կարևորեցին ներկաների մասնակցությունը աշխատանքային խմբի աշխատանքներին:

Այնուետև «Ըդվայզ» ընկերության ներկայացուցիչ Երանուհի Հակոբյանը հակիրճ ներկայացրեց իրականացված աշխատանքների ընթացքը, բացահայտված խնդիրները և դրանց համար առաջարկվող համապատասխան լուծումները, որոնք դասակարգված էին ըստ օրենսդրական դաշտում առաջարկվող լուծումների, ինստիտուցիոնալ դաշտում առաջարկվող լուծումների և պահանջվող ռեսուրսների վերաբերյալ առաջարկվող լուծումների:

Ներկայացման ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին իրենց առաջարկությունները, հարցերը և ներկայացվող առաջարկների, ձևակերպումների վերաբերյալ իրենց ունեցած մտահոգությունները: Մասնավորապես՝

- Հայեցակարգով առաջարկվում է փոփոխել օրենսդրական դաշտը՝ միասնական մոտեցում ապահովելով համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի համար: Քննարկվեց, որ առաջարկ է եղել մասնավոր սեփականության արոտավայրերի հանդեպ ապահովել նույն մոտեցումը, ինչ պետական և համայնքային արոտավայրերի: Մասնակիցները շեշտեցին որ մասնավոր սեփականության արոտավայրերը և խոտհարքները բազում խնդիրներ են առաջացնում: Չնայած որ, ըստ Հողային օրենսգրքի, չի կարելի հողը տանել դեգրադացման՝ անկախ դրա սեփականության ձևից, դեգրադացման վերահսկում իրականացվում է միայն ահազանգի դեպքում և նշված մեխանիզմը լիարժեք չի կարող կանխել ցանկացած սեփականության ձևի արոտավայրերի դեգրադացումը: Նշվեց, որ վերահսկման գործառույթը հնարավոր է օրենքով տալ/պատվիրակել համայնքներին:
- Առաջարկվեց վարձավճարները սահմանել ըստ արոտաշրջանի և գանձումը սահմանել ըստ գլխաքանակի և այդ արոտից օգտվելու ժամանակահատվածի: Այդուհանդերձ ընդգծվեց, որ ավելի կարճ ժամկետով գանձումը
- Առաջարկվեց հանրային քննարկման նյութ դարձնել ոչ թե արոտավայրի կառավարման պլանները, քանի որ դրանք մասնագետի կողմից պատրաստված փաստաթուղթ են, այլ դրանցում ներառված արածեցման սխեմաները: Այնուամենայնիվ մասնակիցները դեմ չէին քննարկել կառավարման պլաններն ամբողջությամբ:

- Կարևորվեց ՏԻՄ անձնակազմում օրենքով ոլորտի համար կարևոր հաստիքներ՝ գյուղատնտես, անասնաբույժ, հանդապահ սահմանելու պահանջը:
- Մատնանշվեց, որ անդրադարձ չի կատարվել այն դեպքին, երբ արոտավայրի համար հայտարարվում է մրցույթ, որը հաղթում է ոչ թե համայնքի բնակիչը, այլ՝ այլ համայնքի բնակիչը:
- Մատնանշվեց, որ արոտավճար հավաքելը օրենքով չի պարտադրվում:
- Ենթկառուցվածքների առկայությամբ արոտավայրի ավելի թանկ գնով վարձակալության տալը նշվեց որ խնդրահարույց է:

Վերջում ամփոփվեցին հայեցակարգի վերջնականացման հետագա քայլերը: Քննարկվեց, որ առաջարկությունների գլուխը կվերանայվի՝ հաշվի առնելով ստացված մեկնաբանությունները և կշրջանառվի աշխատանքային խմբի անդամների շրջանում:

Հավելված 5. Կենտրոնական Ասիայի երկրներում արոտների կառավարման ոլորտում առկա խնդիրները

Ղազախստան	
Ընդհանուր արոտային տարածքներ	182,6 միլիոն հեկտար (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացված արոտային տարածքներ	26,83 տոկոս (Communitybased pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Անասնագլխաքանակ	• Խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 4,5 միլիոն • Ոչխարներ և այծեր՝ 10,6 միլիոն • Ձիեր և ուղտեր՝ 1 միլիոն (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացման հիմնական պատճառներ	Պահանջվող ռեսուրսների և ենթակառուցվածքների բացակայության հետևանքով հեռագնա արոտավայրերը հիմնականում չեն օգտագործվում, իսկ համայնքամերձ արոտավայրերը գերօգտագործվում են: Արդյունքում, ի հայտ է գալիս արոտավայրերի դեգրադացում:
Օրենսդրական դաշտ	Ղազախստանը հանդիսանում է Կենտրոնական Ասիայի միակ երկիրը, որտեղ արոտավայրերն ամբողջությամբ չեն հանդիսանում պետական սեփականություն՝ գործող Հողային Օրենսգիրքը հնարավորություն է տալիս վարելահողերի և արոտավայրերի սեփականաշնորհում անհատների կողմից: Արդյունքում, մեծ քանակությամբ բնական կերհանդակներ հանդիսանում են անհատների կամ կազմակերպությունների սեփականություն: Սա իր հերթին հանգեցնում է հետևյալ խնդիրների՝ • Նվազեցնում է կենդանիների մոբիլությունը և արոտավայրերի արդյունավետ օգտագործումը, • Բացասական է անդրադառնում շրջակա միջավայրի վրա, քանի որ անհատական սեփականաշնորհման դեպքում օգտագործողները որպես կանոն ավելի քիչ են հոգ տանում շրջակա միջավայրի մասին:

Տաջիկստան	
Ընդհանուր արոտային տարածքներ	3,5 միլիոն հեկտար (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացված	Ավելի քան 90 տոկոս (Community based pasture management in

արոտպայ տարածքներ	Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացման հիմնական պատճառներ	Դեգրադացման հիմնական պատճառ է հանդիսացել գերօգտագործումը: Միևնույն ժամանակ վառելիքի բացակայության հետևանքով, երկար տարիներ արոտավայրերում առկա խոտը հանդիսացել է վառելանյութ տեղի բնակչության համար:
Անասնագլխաքանակ	• Խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 1 միլիոն • Ոչխարներ և այծեր՝ 3 միլիոն (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Օրենսդրական դաշտ	Համաձայն Հողային Օրենսգրքի Տաջիկստանում բոլոր գյուղատնտեսական նշանակության հողերը հանդիսանում են պետական սեփականություն: Միևնույն ժամանակ, Օրենսգիրքը հնարավորություն է տալիս անհատներին ձեռք բերել արոտավայրեր մշտական վարձակալությամբ և բացառիկ օգտագործման իրավունքով: Այս հնարավորությունը տեսականորեն ենթադրում է, որ արոտավայրերը կարող են որպես սեփականություն օգտագործվել անհատների կողմից՝ սահմանափակելով մյուս արոտօգտագործողների հասանելիությունը: Միևնույն ժամանակ, տնային տնտեսությունների հիմնական մասն ունեն մշտական օգտագործման իրավունք այսպես կոչված «Ընդհանուր օգտագործման արոտավայրերում (collective dekhan farms)»: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր տնային տնտեսություն կարող է օգտագործել ընդհանուր օգտագործման արոտավայրը և դրա դիմաց վճարել սահմանված հարկ՝ անկախ իր ունեցած անասնագլխաքանակից: Այստեղ նույնպես հանգում ենք հարկերի գանձման ոչ արդարացի համակարգի, ինչի արդյունքում շատ համայնքապետեր, չնայած գործող օրենսդրական պահանջների, համամասնորեն բաշխել են հարկերը տնային տնտեսությունների միջև՝ հիմք ընդունելով վերջիններիս ունեցած անասնագլխաքանակը:

Թուրքմենստան	
Ընդհանուր արոտային տարածքներ	38,47 միլիոն հեկտար (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացված արոտային տարածքներ	46 տոկոս (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացման հիմնական	Ֆինանսական ռեսուրսների սղության հետևանքով առկա է ենթակառուցվածքների բացակայություն, ինչի հետևանքով հեռագնա արոտավայրերը չեն օգտագործվում, իսկ

պատճառներ	համայնքամերձ արոտները գերօգտագործվում են: Արդյունքում, ի հայտ է գալիս արոտների դեգրադացում:
Օրենսդրական դաշտ	Թուրքմենստանում բոլոր արոտավայրերը հանդիսանում են պետական սեփականություն և տրամադրվում է տնտեսություններին՝ օգտագործման իրավունքով՝ անվճար: Միևնույն ժամանակ, օրենսդրությունը հնարավորություն է տալիս իրականացնել հողերի սեփականաշնորհում: Սակայն, ըստ էության, չկա որևէ տարբերություն սեփականության և օգտագործման իրավունք ունեցող տնտեսությունների միջև: Նրանք երկուսն էլ կարող են օգտագործել արոտավայրը, սակայն օրենսդրությունն արգելում է սեփականատերերին օտարել իրենց սեփականությունը հանդիսացող արոտավայրերը: Արոտավայրերի անվճար օգտագործման հետևանքով ի հայտ է գալիս ֆինանսական ռեսուրսների սղություն:

Ուզբեկստան	
Ընդհանուր արոտային տարածքներ	25,5 միլիոն հեկտար (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացված արոտային տարածքներ	42 տոկոս (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացման հիմնական պատճառներ	Դեգրադացման հիմնական պատճառ է հանդիսանում այն, որ տնային տնտեսություններին բաժին է հասնում շատ փոքր արոտային տարածքներ՝ համեմատած իրենց ունեցած անասնագլխաքանակի հետ: Արդյունքում, այս արոտային տարածքները գերարածեցվում են, իսկ այն տարածքները, որոնք գտնվում են պետական ձեռնարկությունների տիրապետման տակ՝ թերարածեցվում են:
Օրենսդրական դաշտ	Հողային Օրենսգրքի համաձայն արոտավայրերը հանդիսանում են պետական սեփականություն: Տնտեսությունները կարող են վարձակալել կոնկրետ արոտային տարածքներ (որոնք ունեն հստակ սահմաններ)՝ օգտագործման իրավունքով: Արոտների վարձակալության տրամադրման գործընթացն իրականացվում է տենդերների միջոցով: Տնտեսությունները վճարում են օգտագործվող արոտների համար՝ հարկերի տեսքով: Այստեղ հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ արոտավայրերի մեծ մասը գտնվում են Ուզբեկստանում դեռևս պահպանված պետական ձեռնարկությունների տիրապետման տակ, ինչի հետևանքով տնային տնտեսություններին բաժին է հասնում շատ փոքր արոտային տարածքներ: Սա իր հերթին հանգեցնում է կենդանիների մոբիլության նվազեցմանը:

Ղրղզստան (մինչ 2009 թվականին ռեֆորմի իրականացումը)	
Ընդհանուր արոտային տարածքներ	9,1 միլիոն հեկտար (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացված արոտային տարածքներ	25 տոկոս (Community based pasture management in Kyrgyzstan, a pilot project in Naryn region)
Դեգրադացման հիմնական պատճառներ	Օրենսդրական դաշտում առկա բացերի և համապատասխան ենթակառուցվածքների (ջրելատեղեր, ճանապարհներ և այլն) բացակայության հետևանքով հեռագնա արոտավայրերը չէին օգտագործվում, իսկ համայնքամերձ արոտները գերօգտագործվում էին: Արդյունքում, ի հայտ էր գալիս արոտների դեգրադացում:
Օրենսդրական դաշտ	Մինչ ռեֆորմի իրականացումը արոտավայրերի կառավարումն իրականացվում էր 3 մակարդակում՝ գյուղամերձ (near village), համայնքային-ինտենսիվ (intensive pasture) և հեռագնա (distant pasture) արոտավայրերի կառավարման համար պատասխանատու էին տարբեր պետական մարմիններ՝ • Մարզային (oblast) մակարդակում կառավարում, որը պատասխանատու էր հեռագնա արոտավայրերի բաշխման, պահպանման և վարձակալության տրամադրման, ինչպես նաև համայնքամերձ արոտավայրերի սահմանների հաստատման համար: • Համայնքային (provincial) մակարդակում կառավարում, որը պատասխանատու էր համայնքային ինտենսիվ արոտավայրերի բաշխման, պահպանման, և վարձակալության տրամադրման, ինչպես նաև գյուղամերձ արոտավայրերի սահմանների հաստատման համար: • Գյուղական մակարդակում կառավարում, որը պատասխանատու էր գյուղամերձ արոտավայրերի բաշխման, պահպանման, և վարձակալության տրամադրման համար, ինչպես նաև գյուղի այն արոտավայրերի օգտագործումը կանոնակարգելու համար, որոնք դեռ տրամադրված չեն վարձակալության: Չնայած այս 3 մարմինների առկայությանը՝ նրանցից ոչ մեկը պատշաճ կերպով չէր իրականացնում իր գործառույթները: Սա իր հերթին հանգեցնում էր նրան, որ տնտեսությունները օգտագործում էին արոտային տարածքներն առանց որևէ վերահսկողության: Արդյունքում, որպես կանոն օգտագործվում էին միայն գյուղի մեջ գտնվող արոտները, քանի որ նրանք հեշտ հասանելի էին:

Հավելված 6. Բնական կերհանդակների կառավարման տեղական փորձ

Ստորև ներկայացված են ՀՀ-ում շահագրգիռ կառույցների կողմից իրականացված ծրագրերի համառոտ նկարագրերը:

ՀՀ Կառավարություն՝ ի դեմս Գյուղատնտեսության նախարարության (ներկայումս՝ Էկոնոմիկայի նախարարություն)	
Ծրագրի անվանում և իրականացման ժամկետ	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» առաջին և երկրորդ ծրագրեր, որոնք իրականացվել են՝ • **Առաջին ծրագիր՝** 2011-2016 թվականներին: • **Երկրորդ ծրագիր՝** մեկնարկել է 2015 թվականին:
Ծրագրի ընդհանուր արժեք	64 միլիոն ԱՄՆ դոլար, որից 48,67 ԱՄՆ դոլարը Համաշխարհային բանկի և դրա մաս կազմող ֆինանսական կառույցների կողմից տրամադրված վարկային միջոցներ
Ծրագրի նպատակ	**Առաջին ծրագրի** նպատակն է՝ • Բարելավել արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը ՀՀ 6 մարզի՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի, 55 նպատակային համայնքներում, և • Ավելացնել ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաների շուկայահանվող արտադրանքը: **Երկրորդ ծրագրի** նպատակն է՝ • Բարելավել արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը ՀՀ 8 մարզի՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի 100 նպատակային համայնքներում, և • Ավելացնել ընտրված անասնապահական և բարձրաժեք ագրոպարենային արժեշղթաների շուկայահանվող արտադրանքը:
Ծրագրի արդյունքներ	**Առաջին ծրագիր՝** • Վերոնշյալ մարզերի 81 (նախատեսված 55-ի փոխարեն) համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ ու «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, • Իրականացվել է 79 համայնքի համայնքամերձ դեգրադացված արոտավայրերի վիճակի գնահատում,

	մշակվել են դրանց վերականգնմանն ուղղված միջոցառումներ, իրականացվել է շուրջ 350 հա-ի բարելավման աշխատանքներ և կատարվել է վերականգնված արոտավայրերի վիճակի գնահատում: • Ջրարբիացվել է նախկինում չօգտագործվող կամ թերի օգտագործվող շուրջ 125 000 հա արոտավայր, **Երկրորդ ծրագիր՝** • Վերոնշյալ մարզերի 109 (նախատեսված 100-ի փոխարեն) համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ ու «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, • Համայնքներից 109-ի համար մշակվել են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլաններ, • Ջրարբիացվել է նախկինում չօգտագործվող կամ թերի օգտագործվող շուրջ 90 000 հա արոտավայր:

Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ	
Ծրագրի անվանում և իրականացման ժամկետներ	Ծրագիր 1: «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» (2014-2020թթ.) Ծրագիր 2: «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» (2017-2020թթ.)
Ծրագրի ֆինանսավորում	Ծրագիր 1: Շվեյցարիայի Զարգազման և Համագործակցության Գործակալություն: Ծրագիր 2: Ավստրիայի Զարգացման Գործակալություն և Շվեյցարիայի Զարգազման և Համագործակցության Գործակալություն:
Ծրագրի նպատակ	Երկու ծրագրերի խնդիրներից է ՏԻՄ-երի կարողությունների հզորացումը՝ աջակցելու գյուղական բնակավայրերի տնտեսական զարգացմանը, մասնավորապես՝ արոտների արդյունավետ օգտագործման և կառավարման բարելավված կարողությունների ներդրման միջոցով:
Ծրագրերի արդյունքներ	Սյունիքի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի 160 000 ընդհանուր բնակչությամբ 200 գյուղական բնակավայրերում՝ • ՏԻՄ-երի հետ սերտ համագործակցության և դրանց կարողությունների բարելավման շնորհիվ թիրախային մարզերի 155 բնակավայրերում մշակվել են արոտների կայուն կառավարման պլաններ և գործարկվում են արոտավայրերի հերթափոխային արածեցման սխեմաներ, բացի այդ՝

	տեխնիկական աջակցություն է տրամադրվել թիրախային բնակավայրերում արոտների կայուն կառավարման ընթացակարգերի ներդրման ուղղությամբ: • Մինչ օրս կառուցվել կամ հիմնանորոգվել են շուրջ 500 արոտային ենթակառուցվածքներ, ինչի արդյունքում շուրջ 106 000 հեկտար արոտավայրեր հասանելի են դարձել անասնապահական տնտեսությունների համար: • Վերականգնողական բնույթի մակերեսային բարելավումների իրականացման շնորհիվ ավելի քան 500 հեկտար դեգրադացված արոտավայրում բարելավվել է արոտների էկոլոգիական և տնտեսական վիճակը, ավելացել է արոտային բուսածածկերի արտադրողականությունն ու որակական կազմը, այդ տարածքները հասանելի են դարձել արոտօգտագործող տնտեսվարողներին: • Թիրախային մարզերում իրականացվել է բազմամյա և հյութալի կերային մշակաբույսերի՝ կորնգանի, առվույտի, կերի ճակնդեղի, եգիպտացորենի շուրջ 1 130 հեկտար ցանքս, ինչը դրական է անդրադառնում մսուրային ժամանակահատվածում կերապահովման խնդրի լուծմանը և նվազեցվում է վաղ գարնանային և ուշաշնանային ճնշումը բնական կերհանդակների վրա, բարձրանում է կենդանիների մթերատվությունը: • Արոտավայրերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ծրագրերի շրջանակներում մինչ օրս ավելի քան 1 100 մարդ մասնակցել է արոտավայրերի մշտադիտարկման, արդյունավետ օգտագործման և կայուն կառավարման կարգերի կիրառման վերաբերյալ թեմատիկ դասընթացների, փորձի փոխանակման այցելությունների: Բացի վերոնշյալից, իրականացված ծրագրերի հիմնական ձեռքբերումը կարելի է համարել համայնքներում արոտների կառավարման մշակույթի ներդրումը և դրա կարևորության գիտակցության բարձրացումը բնակչության շրջանում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	
Ծրագիր 1	
Ծրագրի անվանում և իրականացման ժամկետներ	Կլիմա Իստ պիլոտային ծրագիր, որն իրականացվել է 2013-2017 թվականներին
Ծրագրի ֆինանսավորում	Եվրոպական Միություն
Ծրագրի նպատակ	Դեգրադացված լեռնային արոտավայրերի և անտառների վերականգնման, ինչպես նաև շահառու համայնքներում հողերի կայուն կառավարման միջոցով տնտեսական

	օգուտների խթանման ուղղությամբ աշխատանքների իրականացում:
Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումներ	Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Ծովակ, Լճավան և Ծափաթաղ, Մաքենիս, Փամբակ և Դարանակ համայնքներում (այժմ բնակավայրեր)՝ • Վերականգնվել են համայնքների հեռագնա արոտավայրերի ենթակառուցվածքները և համայնքամերձ դեգրադացված արոտավայրերում կատարվել են բարելավման աշխատանքներ: • Մշակվել են հերթափոխ-արոտաբաժնային արածեցման պլաններ և անցկացվել են այդ պլանների իրականացման վերաբերյալ դասընթացներ: Մշակված պլանները ծառայում են 7 500 հա արոտավայրերի կառավարման բարելավմանը:
Ծրագիր 2	
Ծրագրի անվանում և իրականացման ժամկետներ	«Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հայաստանի հյուսիս-արևելյան լեռնային լանդշաֆտներում», որը մեկնարկել է 2016 թվականին
Ծրագրի նպատակ	Մեղմել անտառամերձ համայնքների կախվածությունը անտառներից
Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներ	Ծրագիրն իրականացվում է Տավուշի և Լոռու մարզերում և արոտավայրերին առնչվող գործողությունների մասով նախատեսվում է իրականացնել՝ • Մոտ 90 հա արոտավայրի վերականգնում և մոտ 140 հեկտարի վրա կերային մշակաբույսերի ցանք, • Ուսուցողական դասընթացներ:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն	
Ծրագիր 1	
Ծրագրի անվանում և իրականացման ժամկետներ	«Կենսաբազմազանության Կայուն Կառավարում», որն իրականացվել է 2009-2015 թվականներին
Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումներ	• Մշակվել են Ուղեցույցը և Ձեռնարկը: • 32 համայնքներ վերապատրաստվել են արոտների մշտադիտարկման և կառավարման պլանների մշակման ու իրականացման ոլորտներում: • 32 համայնքներում իրականացվել է արոտների մշտադիտարկում:

	• 27 համայնքներում մշակվել և լրամշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ:
Ծրագիր 2	
Ծրագրի անվանում և իրականացման ժամկետներ	«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագիրը, որն իրականացվում է 2015 թվականից մինչև 2019 թվականի նոյեմբեր:
Ծրագրի նպատակ	Նպաստել կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների ինտեգրված և միջոլորտային կառավարմանը:
Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներ	• Տեղական մակարդակում կայուն կառավարմանն ուղղված պիլոտային միջոցառումների օժանդակում և գործընթացների համակարգում: • Տեղական և ազգային մակարդակում պետական կառավարման մարմինների կարողությունների հզորացում և հանրային իրազեկման ավելացում: • Կենսաբազմազանության կառավարման և էկոհամակարգային ծառայությունների կարևորության վերաբերյալ հանրության իրազեկում: • Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների բնագավառում ունեցած մասնագիտական փորձի փոխանակման և համագործակցության խթանում միջազգային մակարդակում: • Մշակվել է Դեգրադացված բնական կերհանդակների (արոտավայրեր և խոտհարքներ) բարելավման ուղեցույցը:

Հավելված 7. Ոլորտին բնորոշ խնդիրների լուծմանն ուղղված միջազգային փորձը

Արոտավայրերի կառավարման ոլորտին բնորոշ խնդիրների լուծմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է հետևյալ 3 ասպեկտներով, քանի որ այս ասպեկտները տարբեր երկրների կողմից դիտարկվել են, որպես արոտավայրերի կառավարման կարևորագույն և հիմնական ցուցանիշներ՝

- **Հավասարություն/հասանելիություն,** որի շրջանակներում ուսումնասիրվել է, թե տարբեր երկրներում գործող արոտավայրերի կառավարման համակարգերը որքանով են ապահովում արոտավայրերի հասանելիությունը տարբեր օգտագործողների խմբերի համար և ինչ մեխանիզմներ են կիրառվում խոցելի խմբերի հասանելիությունը բարելավելու համար:
- **Տնտեսական արդյունավետություն,** որի շրջանակներում ուսումնասիրվել են արոտավայրերի կառավարման ոլորտում իրականացված ներդրումների արդյունավետությունը:
- **Շրջակա միջավայրի պահպանություն,** որի շրջանակներում ուսումնասիրվել են, թե արոտավայրերի կայուն կառավարման ինչպիսի մեխանիզմներ են գործում տարբեր երկրներում, որոնք կապահովեն արոտավայրերի կայուն օգտագործումը, վերականգնումը, կենսաբազմազանության խոցելիության կրճատումը, ինչպես նաև բնական էկոհամակարգերի կայուն զարգացումն ապագայում:

Հավասարություն/հասանելիություն
Նպատակ
• Բացահայտել արոտավայրերի առավել քիչ հասանելիություն ունեցող օգտագործողների խմբերին և առաջարկել մեխանիզմներ, որոնք կբարելավեն այդ խմբերի հասանելիությունը: • Առաջարկել մեխանիզմներ արոտավայրերի կառավարման գործընթացում տարբեր խմբերի արոտօգտագործողների ներկայացուցչությունն ապահովելու համար: • Սահմանել չափանիշներ, թե ովքեր կարող են օգտվել տվյալ արոտային տարածքից՝ միևնույն ժամանակ ընձեռելով տարբեր արոտավայրերի միջև կենդանիների տեղաշարժի հնարավորություն:
Որոնք են խոցելի խմբերը
• **Ֆինանսապես խոցելի խմբեր:** Նույնիսկ ընդհանուր գույքային օգտագործման մեխանիզմների դեպքում ֆինանսապես խոցելի խմբերն ունեն սահմանափակ հասանելիություն արոտավայրերին, ինչը պայմանավորված է հիմնականում արոտավայրեր հասնելու և օգտագործելու հետ կապված ծախսերով: • **Կանայք և միայնակ մայրեր**: **Չինաստանում** և **Հարավային Ասիայում**, այն ընտանիքները, որտեղ առկա են միայնակ կանայք, ունեն հեռագնա արոտավայրերին հասնելու սահմանափակումներ: **Ղրղզստանում** շատ տղամարդիկ զբաղված են արտագնա աշխատանքով և անասնապահությամբ զբաղվում են կանայք, որոնք

հիմնականում ներկայացված չեն արոտների օգտագործման ասոցիացիաներում:

- **Երիտասարդներ:** Երիտասարդ արոտօգտագործողներին երբեմն դժվար է բանակցել փորձառու արոտօգտագործողների հետ արոտներին հավասար հասանելիություն ունենալու համար:
- **Էթնիկ փոքրամասնություններ:** Շատ երկրներում, օրինակ **Աֆղանստանում,** էթնիկ փոքրամասնություններն ունենում են խնդիրներ տեղացի արոտօգտագործողների հետ:

Ինչպիսի ինստիտուցիոնալ և իրավական փոփոխություններ կարելի է իրականացել խոցելի խմբերի հասանելիութունը բարձրացնելու համար

- **Կենտրոնական Ասիա, Չինաստան, Նիգերիա, Մոնղոլիա:** Այս երկրների կողմից որպես խնդրի հիմնական դրդապատճառ նշվել է արոտավայրերի անհատական վարձակալության մեխանիզմի կիրառումը, և որպես լուծում անցում է կատարվել/նախատեսվում է անցում կատարել անհատական վարձակալության մեխանիզմից ընդհանուր գույքի օգտագործման սկզբունքի:

- **Ղրղզստան:** Օրենքով սահմանվել է Արոտօգտագործողների ասոցիացիա ստեղծելու պահանջ, որոնք հանդիսանում են օրենքով պաշտոնապես գրանցված իրավաբանական անձինք: Այս խմբերում ընդգրկված են տվյալ համայնքի բոլոր խմբերի, այդ թվում խոցելի խմբերի արոտօգտագործողները՝ այսպիսով ապահովելով բոլոր խմբերի շահերը:

  Արոտավայրերի կառավարման նոր մեխանիզմի արդյունավետ ներդրման և տեղացի բնակիչների իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպվել են համապատասխան դասընթացներ՝ մոդելային խաղերի տեսքով (simulation games), որտեղ մասնակիցները ստանձնել են տարբեր դերեր և անցել են արոտավայրերի արդյունավետ կառավարումը կազմակերպելու համար անհրաժեշտ փուլերը, ներառյալ արոտային պլանի կազմումը, արոտավայրի վիճակի մոնիտորինգը, համապատասխան ենթակառուցվածքների անհրաժեշտության գնահատումը և այլն:

  Ղրղզստանում գործող ինստիտուցիոնալ համակարգը և տարբեր մարմինների լիազորությունները, ինչպես նաև արոտավայրերի կառավարման համար պատասխանատու մարմինների և անդամների կառուցվածքը ներկայացված են սույն հավելվածի վերջում:

- **Մոնղոլիա:** Այստեղ նույնպես ստեղծվել են Արոտավայրերի ասոցիացիաներ, որոնք սակայն իրենցից ներկայացնում են ոչ ֆորմալ խմբեր և միավորվում են ըստ անհրաժեշտության: Այս խմբերում նույնպես ընդգրկված են տվյալ համայնքի բոլոր խմբերի, այդ թվում խոցելի խմբերի արոտօգտագործողները՝ այսպիսով ապահովելով բոլոր խմբերի շահերը:

- **Շվեյցարիա:** Բնական կերհանդակների կայուն կառավարման և արոտօգտագործողների բոլոր խմբերի շահերի ներկայացման նպատակով Շվեյցարիայում ստեղծվել են կոոպերատիվներ, որոնց անդամ են հանդիսանում տվյալ համայնքում ապրող բոլոր բնակիչները: Կոոպերատիվի անդամներն իրենց հերթին ընտրում են Կառավարման Կոմիտեի անդամներին (առնվազն 3 հոգուց բաղկացած): Կառավարման կոմիտեի գործառույթները ներառում են՝
  - Արոտավայրերի օգտագործման մոնիտորինգի իրականացում,

- Տվյալ տարածք արտաքին արոտօգտագործողների մուտքի հաստատում կամ մերժում,
- Արոտօգտագործման ժամանակաշրջանի սահմանում,
- Կոոպերատիվի անդամներին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկացում:

- **Կենտրոնական Ասիա:** Արոտավայրերի օգտագործման համար վարձավճարների գանձման ամենաարդարացի և արդյունավետ մեխանիզմն առաջարկվել է վարձավճարի սահմանում ըստ գլխաքանակի, իսկ անբարենպաստ հասանելիություն ունեցող խմբերի համար առաջարկվել է կիրառել վարձավճարների զեղչային համակարգ: Միևնույն ժամանակ, առաջարկվել է կիրառել զեղչային համակարգ համայնքներից առավել հեռու գտնվող արոտավայրերի համար, որտեղ առկա չեն պահանջվող ենթակառուցվածքներ:

Ըստ գլխաքանակի վարձավճարների գանձման **Ղրղզստանում** կիրառվող մեխանիզմի մանրամասները ներկայացված են սույն հավելվածի վերջում:

Ինչպես են որոշվում արոտօգտագործողների խմբերը ընդհանուր գույքի օգտագործման մեխանիզմի դեպքում

Արոտօգտագտագործողների խմբերի որոշման համար հիմնականում կիրառվում են հետևյալ 2 սկզբունքները՝

- **Ըստ տնտեսական նշանակության:** Այս սկզբունքի համաձայն խմբի անդամներ կարող են հանդիսանալ միայն անասնապահությամբ զբաղվող տնտեսությունները՝ բացառելով մյուս օգտագործողներին, ինչպիսիք են մեղվաբույծները, կամ արոտավայրերից վառելափայտ, սունկ և այլ ռեսուրսներ հավաքողները:
- **Ըստ տարածքային պատկանելիության:** Այս սկզբունքի համաձայն խմբի անդամներին որոշելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղացի բնակիչներին, այլ ոչ թե, օրինակ, քաղաքային գործարարներին, որոնք զբաղեցրել են համայնքային արոտավայրերը: Սա ենթադրում է, որ խմբի անդամ կարող են հանդիսանալ նաև անասնապահությամբ չզբաղվող անձինք, սակայն որոնք օգտագործում են արոտավայրերն այլ նշանակությամբ:

Շատ երկրների կողմից առաջարկվում է կիրառել վերոնշյալ 2 սկզբունքների համադրությունը: Օրինակ **Ֆրանսիայում,** արոտօգտագործողների խմբերում ընդգրկվում են նախ տեղացի բնակիչները, իսկ ազատ արոտավայրերի առկայության դեպքում նաև այլ համայնքների բնակիչներ:

Ինչպես է կազմակերպվում կենդանիների շարժն արոտավայրերի միջևընդհանուր գույքի օգտագործման մեխանիզմի դեպքում

Տարբեր արոտավայրերի միջև կենդանիների ազատ շարժի ապահովումը կարևորվում է այնքանով, որ շատ հաճախ են հանդիպում դեպքեր, երբ մի համայնքում լինում է անասնագլխաքանակի ավելցուկ համեմատած արոտային տարածքների հետ, այնինչ մեկ այլ համայնքում առկա է ոչ բավարար անասնագլխաքանակ: Առաջարկվող մեխանիզմներն են՝

- **Ղրղզստան:** Այստեղ յուրաքանչյուր Արոտների օգտագործման ասոցիացիայի հատկացված է որոշակի սեզոնային արոտային տարածքներ, որոնք կարող են գտնվել

նաև տվյալ համայնքից դուրս: Հատկացված արոտային տարածքների սահմանները որոշվում է Սահմանների հանձնաժողովի կողմից: Միևնույն ժամանակ օրենքով սահմանվել է Արոտօգտագործողների ասոցիացիաների միջև կենդանիների տեղաշարժի ֆորմալ պայմանագրեր կնքելու հնարավորություն: Այսպիսով, չօգտագործված արոտային տարածքները ասոցիացիաների միջև կնքված պայմանագրերի հիման վրա տրամադրվում են այլ համայնքների արոտօգտագործողներին:

- **Մոնղոլիա:** Այստեղ արոտային տարածքների սահմանազատում առկա չէ և սովորաբար կենդանիների տեղաշարժը կազմակերպվում է արոտօգտագործողների խմբերի միջև ոչ ֆորմալ համաձայնությունների միջոցով: Որպես կանոն, տեղաշարժի հնարավորությունները նախատեսվում են արոտավայրերի օգտագործման պլանները կազմելիս:

Արդյունավետություն
Նպատակ
Բացահայտել արոտավայրերի կառավարման ոլորտում իրականացված ներդրումների հիմնական աղբյուրները և դրանց արդյունավետությունը:
Որոնք են այս ոլորտում ներդրումների հիմնական աղբյուրները
Որպես այս ոլորտում ներդրումներ իրականացնող հիմնական աղբյուրներ տարբեր երկրների կողմից առանձնացվել են հետևյալները՝ • Արոտօգտագործման դիմաց կատարված վարձավճարները: **Ղրղզստանում** իրականացված ռեֆորմից հետո օրենսդրությամբ սահմանվել է, որ Արոտային կոմիտեների տարեկան բյուջեների առնվազն 60 տոկոսը պետք է ուղղվի արոտավայրերի բարելավման միջոցառումներին, իսկ մնացած 40 տոկոսը աշխատավարձերին և այլ ծախսերին: • Կոոպերատիվների/ասոցիացիաների անդամների կողմից կատարված անդամակցության վճարումները: • Արոտային տարածքների վարձակալության տրամադրումը տուրիստական նպատակներով: • Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից այս ոլորտում իրականացվող ծրագրերը:
Ոլորտում որ ուղղությամբ կատարված ներդրումներն են դիտարկվել առավել արդյունավետ
Կենտրոնական Ասիայի երկրների կողմից, որպես ոլորտի կարևորագույն ներդրում առանձնացվել է ջրելատեղերի կառուցումը: Մասնավորապես, նշվել է, որ ջրելատեղերի սակավությունը հանդիսանում է հիմնական պատճառ կենդանիների ոչ լիարժեք շարժունակության և մասնավորապես հեռագնա արոտավայրերի դեգրադացման համար:

Շրջակա միջավայրի պահպանություն
Նպատակ

- Բացահայտել արոտավայրերի կառավարման շրջանակներում շրջակա միջավայրի կայունության բարելավման մեթոդները, ինչպիսիք են կենդանիների մոբիլության խրախուսումը և անասնագլխաքանակի սահմանափակումը արոտավայրերում:
- Բացահայտել արոտավայրերի կառավարման արդյունավետ մոնիտորինգի մեխանիզմները տարբեր երկրներում:

Ինչպես բարձրացնել կենդանիների մոբիլությունը որպես արոտավայրերի կայուն կառավարման գործիք

Կենդանիների մոբիլության ապահովումը հանդիսանում է արոտավայրերի կայուն կառավարման հիմնական մեխանիզմներից մեկը: Որպես կանոն, տարբեր երկրների կողմից, կենդանիների մոբիլության համար կիրառվում են հետևյալ 3 գործիքները՝

- **Ֆինանսական գործիքներ՝**
  - Արոտավայրերի օգտագործման համար տարբեր վարձավճարների/հարկերի գանձման մեխանիզմի կիրառում: Մասնավորապես, հեռագնա արոտավայրերի համար ավելի ցածր վարձավճարների/հարկերի կիրառում համեմատած համայնքամերձ արոտավայրերի:
  - Արոտավայրերի օգտագործման վարձավճարների գանձում ըստ անասնագլխաքանակի՝ քառակուսի մետրի փոխարեն:
  - Ենթակառուցվածքների զարգացման նպատակով իրականացված ուղղակի ներդրումներ: Օրինակ՝ ճանապարհների բարելավում, ջրելատեղերի, մակատեղերի և կացարանների կառուցում հեռագնա արոտավայրերում:
- **Օրենսդրական գործիքներ,** որը ենթադրում է այնպիսի օրենսդրական դաշտի ստեղծում, որը կապահովի կենդանիների ազատ տեղաշարժի հնարավորությունը: Մասնավորապես՝ արոտավայրերի անհատական վարձակալության մեխանիզմից անցում ընդհանուր գույքային օգտագործման սկզբունքի, որի դեպքում արոտավայրի օգտագործման իրավունքը բաշխվում է բոլոր օգտագործողների միջև, ինչն էլ իր հերթին բարձրացնում է կենդանիների մոբիլությունը:
- **Քարտեզագրման աշխատանքներ,** որը ենթադրում է արոտավայրերի գույքագրման աշխատանքներ և համապատասխան տեղեկատվական բազայի ստեղծում, որը հնարավորություն կտա համայնքներին տեղեկանալ առկա արոտավայրերի և վերջիններիս վիճակի մասին: Այս տեղեկատվությունը հնարավորություն կտա արոտավայրերի առավել արդյունավետ օգտագործում կազմակերպելու համար:

Ինչպես է կառավարվում արոտավայրում անասնագլխաքանակի սահմանափակումը տարբեր երկրների կողմից

- **Մոնղոլիա:** Այստեղ անասնագլխաքանակի կառավարման նպատակով նախատեսվում է ներդնել մի համակարգ, որի դեպքում այն արոտօգտագործողների խմբերը, որոնք կգերազանցեն արոտային պլանով սահմանված թույլատրելի գլխաքանակը ավելի շատ կհարկվեն համեմատած այն խմբերին, որոնք կպահպանեն սահմանված գլխաքանակի պահանջը:
- **Թուրքմենստան:** Այստեղ անասնագլխաքանակի նվազեցման նպատակով կիրառվել են խթանող գործիքներ: Մասնավորապես, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին առաջարկվել է լրացուցիչ հողատարածքների տրամադրում պտղատու ծառեր տնկելու համար, եթե նրանք կրճատեն իրենց

անասնագլխաքանակը:

- **Չինաստան:** Չինաստանում նույնպես եկել են անասնագլխաքանակի նվազեցման համաձայնության, որը տեղի է ունեցել կրոնական հաստատության միջոցով: Մասնավորապես, 2 համայնքներում, որտեղ առկա է եղել արոտավայրերի ոչնչացման վտանգ, տեղի բնակչությունը եկել է համաձայնության պահպանել իր անասնագլխաքանակն առավելագույնը 70 ոչխարին համարժեք կենդանու քանակությամբ: Համաձայնությունը պահպանելու համար՝ բնակիչներն իրականացրել են երդման արարողություն, իսկ վերահսկողությունն իրականացվում է տարեկան 2 անգամ կենդանիների գույքագրում իրականացնելու միջոցով:

Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մոնիտորինգի ինչպիսի մեխանիզմներ են գործում և արդյոք արոտօգտագործողները ներգրավված են մոնիտորինգի իրականացման գործընթացում

- **Ղրղզստան:** Այստեղ գործում է մոնիտորինգի 2 համակարգ՝
  - Համայնքային մակարդակում, որտեղ Արոտավայրերի կոմիտեները մասնակցում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծված մոնիտորինգի իրականացման խմբերում: Մոնիտորինգն իրականացվում է ավանդական փորձի և գիտելիքների հիման վրա:
  - Ազգային մակարդակում, որի դեպքում Հողերի Կառավարման Ինստիտուտը իրականացնում է գիտական գնահատում առանցքային հողատարածքներում: Ներկա պահին Արոտավայրերի կոմիտեն չունի հասանելիություն իրականացված գիտական գնահատականներին և 2 համակարգերն ինտեգրված չեն: Նախատեսվում է ստեղծել նոր համակարգ, որը կներառի և համայնքային մակարդակում իրականացված գնահատումները, և ազգային մակարդակում գիտական գնահատումները:

- **Մոնղոլիա:** Այստեղ ևս գործում է մոնիտորինգի 2 համակարգ՝
  - Համայնքային մակարդակում, որտեղ մոնիտորինգն իրականացվում է հենց արոտօգտագործողների կողմից՝ իրենց կողմից օգտագործված արոտների շրջանակներում:
  - Ազգային մակարդակում, որտեղ իրականացվում է գիտական գնահատում ամբողջ երկրի մասշտաբով արոտների վիճակի բացահայտման նպատակով: Այստեղ նույնպես մոնիտորինգի 2 համակարգերն ինտեգրված չեն:

- **Շվեյցարիա:** Այստեղ գործում է մոնիտորինգի հետևյալ համակարգը՝
  - Գործում է միասնական տեղեկատվական բազա երկրում առկա բոլոր արոտավայրերի վերաբերյալ, որը ներառում է նաև տեղեկատվություն յուրաքանչյուր արոտավայրի համար առավելագույն թույլատրելի անասնագլխաքանակի վերաբերյալ:
  - Մոնիտորինգն իրականացվում է համայնքի մակարդակում՝ Կառավարման կոմիտեի կողմից: Իրականացված մոնիտորինգի արդյունքում թարմացվում է արոտավայրերի վերաբերյալ տվյալների բազան:

Հավելված 7.1. Ղրղզստանում գործող ինստիտուցիոնալ համակարգը և տարբեր մարմինների լիազորությունները

Տեղական ինքնակառավարման մարմին

- ՏԻՄ-երը հանդիսանում են պետքական սեփականություն հանդիսացող արոտավայրերի կառավարման և հսկողության համար պատասխանատու մարմիններ՝ բացառությամբ օտարման իրավունքի:
- ՏԻՄ-երն իրավասու են պատվիրակել արոտավայրերի կառավարման և օգտագործման լիազորությունը Արոտօգտագործողների ասոցիացիային:
- ՏԻՄ-երը պետք է հաստատեն Արոտների օգտագործման տարեկան պլանը:

Արոտօգտագործողների ասոցիացիա

- Համայնքի բնակիչները կարող են ստեղծել արոտօգտագործողների ասոցիացիաներ, որը կներկայացնի կենդանիների սեփականատերերի և այլ արոտօգտագործողների շահերը՝ արոտների օգտագործման և բարելավման հետ կապված:
- Արոտօգտագործողների ասոցիացիաները կարող են ստեղծվել որպես տարածքային հասարակական ինքնակառավարման մարմիններ, որի դեպքում ենթական են գրանցման որպես իրավաբանական անձինք:
- Արոտօգտագործողների ասոցիացիայի բոլոր անդամներն ունեն իրենց համայնքին կցված արոտների օգտագործման առաջնային իրավունք՝ համաձայն Արոտների օգտագործման պլանի:

Արոտօգտագործողների կոմիտե

- Արոտօգտագործողների ասոցիացիայի գործադիր մարմին է համարվում Արոտօգտագործողների կոմիտեն:
- Արոտօգտագործողները պետք է ընտրեն իրենց ներկայացուցիչներին Կոմիտեի կազմում ընդգրկվելու նպատակով:
- Կոմիտեի անդամների թիվը պետք է լինի կենտ թիվ և Արոտօգտագործողների ասոցիացիայի ներկայացուցիչները պետք է կազմեն մեծամասնություն:
- Կոմիտեն լիազորությունները ներառում են՝
  - Համայնքի արոտավայրերի օգտագործման և կառավարման պլանի մշակում,
  - Արոտների օգտագործման տարեկան պլանի մշակում,
  - Վերոնշյալ պլաններով նախատեսված դրույթների իրականացում,
  - Արոտների տնտեսական վիճակի մոնիտորինգ,
  - Արոտային տոմսերի թողարկում՝ համաձայն Արոտների օգտագործման պլանի,
  - Արոտային վճարների հավաքագրում,
  - Արոտների օգտագործման հետ կապված վեճերի լուծում,
  - Արոտային վճարների հավաքագրումից ստացված եկամուտների կառավարում, որոնք պետք է ներդրվեն արոտավայրերի

ենթակառուցվածքների և դրանց սպասարկման, կառավարման և բարելավման նպատակով:

- Արոտօգտագործողների կոմիտեի ստեղծման և աշխատանքների կազմակերպման վերաբերյալ դրույթները, Համայնքի արոտավայրերի օգտագործման և կառավարման պլանի և Արոտների օգտագործման տարեկան պլանի վերաբերյալ ընթացակարգը, ինչպես նաև արոտավայրերի վարձակալության տրամադրման ընթացակարգը պետք է մշակվի արոտավայրերի կառավարման ոլորտում լիազորված պետական մարմնի կողմից և հաստատվի Ղրղզստանի կառավարության կողմից:

Արոտավայրերի կառավարման ոլորտում լիազորված պետական մարմին

- Ղրղզստանի կառավարությունը պետք է նշանակի արոտավայրերի կառավարման ոլորտում լիազորված պետական մարմին, որը պատասխանատու կլինի մշակել արոտավայրերի կառավարման վերաբերյալ քաղաքականություն:
- Լիազորված պետական մարմնի իրավասությունները ներառում են՝
  - Արոտավայրերի կառավարման հետ կապված Ղրղզստանի օրենսդրական պահանջների իրականացման վերաբերյալ առաջարկությունների մշակում,
  - Արոտավայրերի տնտեսական վիճակի և որակի մոնիտորինգի գնահատման ստանդարտների և մեթոդների սահմանում,
  - Արոտավայրերի տնտեսական վիճակի մոնիտորինգի իրականացման վերահսկողություն,
  - Արոտների օգտագործման հետ կապված խնդիրների վերաբերյալ հրահանգների, կանոնների և այլ օրենսդրական ակտերի, ինչպես նաև մեթոդական նյութերի մշակում,
  - Արոտօգտագործողների ասոցիացիայի կողմից համայնքի արոտավայրերի օգտագործման պլանի և Արոտների օգտագործման տարեկան պլանի կիրարկման մոնիտորինգ,
  - ՏԻՄ-երին և Արոտօգտագործման ասոցիացիային արոտների օգտագործման հետ կապված տեխնիկական և այլ օժանդակության տրամադրում:

Ղրղզստանում արոտավայրերի կառավարման համար պատասխանատու մարմինների և անդամների կառուցվածքը



Ղրղզստանում
արոտավայրերի օգտագործման վարձավճարների գնագոյացման մեխանիզմը

Ղրղզստանում բնական կերհանդակների կառավարման շրջանակներում իրականացված ռեֆորմների արդյունքում առաջարկվել է ըստ գլխաքանակի արոտային վարձավճարների հաշվարկման մեխանիզմ: Համաձայն առաջարկվող մեխանիզմի յուրաքանչյուր արոտային տարածքի համար պետք է թողարկել արոտային տոմսեր, որոնք համարժեք կլինեն այդ արոտային տարածքում տվյալ տարվա համար արածեցման թույլատրելի գլխաքանակին: Թողարկված տոմսերը պետք է վաճառվեն արոտօգտագործողներին՝ յուրաքանչյուր օգտագործողի համար հաշվարկելով 1 տոմս:

Առաջարկվել է նաև արոտային տոմսերի գնագոյացման համապատասխան մեխանիզմ, որի հաշվարկման հիմքում ընկած է տվյալ տարվա համար պահանջվող համայնքային բյուջեն և սեզոնայնությունը: Մասնավորապես, առաջարկվող գնագոյացման մեխանիզմի կիրարկման նպատակով անհրաժեշտ է՝

- Հաշվարկել համայնքի համար պահանջվող տարեկան բյուջեն:
- Տարեկան բյուջեն հաշվարկելու համար պետք է կանխատեսել Համայնքի արոտավայրերի օգտագործման և կառավարման պլանով նախատեսված միջոցառումների համար պահանջվող ծախսերը: Սա իր մեջ ներառում է արոտների բարելավմանն ուղղված միջոցառումների, պահանջվող մոնիտորինգի, վճարվելիք աշխատավարձերի հետ կապված ծախսերը:
- Տվյալ սեզոնի համար նախատեսված մեկ արոտային տոմսի արժեքի հաշվարկման համար անհրաժեշտ է՝
  - Տվյալ սեզոնի համար անհրաժեշտ բյուջեն բաժանել տվյալ սեզոնում սահմանված արոտային տարածքի համար թույլատրելի անասնագլխաքանակի վրա:
  - Իսկ տվյալ սեզոնի համար անհրաժեշտ բյուջեն ստանալու համար անհրաժեշտ է համայնքի տարեկան բյուջեն բաժանել տարվա օրերի քանակի վրա և բազմապատկել յուրաքանչյուր սեզոնում սահմանված արոտային օրերով:

Ստորև ներկայացված է արոտային տոմսի հաշվարկման օրինակ՝ 550 800 սոմ պահանջվող համայնքային բյուջեի դեպքում: Համաձայն ներկայացված օրինակի՝

- Ձմեռային արոտի համար անհրաժեշտ բյուջեն հաշվարկվե է հետևյալ կերպ՝ 550,800/365*145=218,811
- Ձմեռային արոտի մեկ արոտային տոմսի արժեքը հաշվարկվել է հետևյալ կերպ՝ 218,811/4,659=47

	Ձմեռային արոտ	Գարնանային արոտ	Ամառային արոտ	Աշնանային արոտ	Ընդամենը
Արոտային օրերի քանակ	145	40	110	70	365
Սահմանված արոտային տարածքում թույլատրելի անասնագլխաքանակ	4,659	9,876	8,734	7,121	
Յուրաքանչյուր սեզոնում մեկ արոտային տոմսի արժեքը(սոմ)	***47***	***6***	***19***	***15***	***87***
Յուրաքանչյուր սեզոնում վճարված ընդհանուր գումար	218,811	60,362	165,995	105,633	**550,800**

Գրականության ցանկ

1. «ՀՀ արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրների և դրանց պատճառահետևանքային կապերի հետազոտություն», ապրիլ 30, 2019: Հետազոտությունն իրականացվել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից՝ «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:
2. «Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները և պարտականությունները հողերի կառավարման և բնապահպանական գործընթացներում», նոյեմբեր, 2017: Փաստաթուղթը մշակվել է «Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:
3. «Արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց»: Փաստաթուղթը մշակվել է «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:
4. «Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկ. Հայաստան»: Փաստաթուղթը մշակվել է «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:
5. “Community based pasture management in Kyrgyzstan”. A pilot project Naryn region.
6. “Pasture management in Central Asia”. Lessons from the First Practitioners’ Conference on Advancement of Sustainable Pasture Management in Central Asia.
7. “South-South Cooperation Trends and Examples of Home-grown Innovative Solutions in the Arab States, Europe and the Commonwealth of Independent States”, pasture management.
8. “Law of the Kyrgys republic on pastures”, passed by the Kyrgyz JogorkuKenesh, December 18, 2008.
9. “Sustainable Land Management in Kyrgyzstan and Tajikistan”, a research review September 2013.
10. “Conflicts over pasture resources in Kyrgyz republic”, research report June 2013.
11. “The management of dry grassland in Switzerland. A Swiss federal program and its local practical application”, Guido Mase.